Azg
Azg armenian daily

Դեկտեմբեր 3 Հինգշաբթի 1992

օրաթերթ
Բ տարի, թիւ 141 (233)
գինը՝ 2ռ.
դասիչ 69149

Երեւան 375010
Հանրապետութեան 47

հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Բախման գոտի

ՄԱԿ-ը շտապ առաքելություն է ուղարկում Հայաստան եւ Ադրբեջան

ՄԱԿի փախստականների գծով Բարձր կոմիսարիատը, ինչպես արդեն հաղորդել էինք երեկ, այսօր շտապ երկու խումբ է ուղարկում Հայաստան եւ Ադրբեջան, օգնության հասնելու երկու երկրներից բռնագաղթված 750 հազար փախստականներին: Երեկ երեկոյան ժնեւից Բարձր կոմիսարիատի կողմից հանդերձավորված հատուկ մի օդանավ բռավ երկու ոլեսությունների մայրաքաղաքներ, հնգական հոգուց բաղկացած շտապ օգնության փորձագետների երկու խմբով, հեռուստահաղորդակցման սարքավորումներով եւ օգնության այլ նյութերով: Սկզբում Բարձր կոմիսարիատը օգնության կիասնի երկու հանրապետությունների 145 հազար փախստականների: Այն Թուրքիայից եւ Իրանից 185 հազար ծածկոց Հայաստանի 92 հազար փախստականների եւ 95 հազար ծածկոց ու 500 ոլաստիկ վրան Ադրբեջանի 53 հազար փախստականների համար: ■

Գիտ

Բարեփոխման հարցը տեղատվություն է տալիս

Որ ՀՀ Գերագույն խորհրդի աշխատանքներում բարեփոխումներ են հարկավոր, կարծես թե ոչ մի պատգամավոր չի կասկածում. նրանք սկզբունքային համաձայնության էին եկել՝ նիստերի սկսման համար անհրաժեշտ քվորումը սահմանել կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցված պատգամավորների կեսից ավելին (այն կազմում է 121 ձայն), իսկ որոշումները եւ օրինագծերն ընդունված համարել, եթե դրա օգտին քվեարկել է նիստի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան պատգամավորների ընդհանուր թվի 1/3-ը, այսինքն՝ 87 հոգի, սակայն...

Այս եռօրյա նիստերում, որոնցից առաջին երկուսը ճաշի ընդմիջումներից հետո ընդհատվում էին քվորում չդիտարկվելու պատճառով, կրկին նորից բորբոքվեցին: Պատգամավորներից շատերը նոր առաջարկություններ էին կատարում՝ ցրել այս Գերագույն խորհուրդը եւ նոր ընտրություններ նշանակել, գնալ ավելի արմատական բարեփոխումների՝ ստեղծելով պրոֆեսիոնալ օրենսդիր մարմին:

ԳԽ նախագահության յոթ անդամների պահանջով գումարվեց այդ մարմնի նիստը «Նախագահության կամավոր հրաժարականի» օրակարգով: Քննարկումների արդյունքում, ինչպես հայտարարեց ՀՀ ԳԽ նախագահի տեղակալ Արտաշես Թումանյանը, որոշվել է խորհրդարան մտցնել նախագահությանն անվստահություն հայտնելու եւ հաջորդ տարվա հուլիսին օրենսդիր իշխանության նոր ընտրություններ նշանակելու հարցերը:

Սակայն խորհրդարանը գործը քվեարկության չհասցրեց՝ ԳԽ օրենքում եւ աշխատակարգում նախատեսվող փոփոխությունները վերադարձվեցին իրավական հարցերի եւ մանդատային ու էթիկայի հարցերի հանձնաժողովներին նորից վերանայելու: Իսկ Գերագույն խորհուրդը շարունակեց հերթական խնդիրների քննարկումները;

Ինչո՞ւ պատգամավորները չկարողացան ընդհանուր հայտարարի գալ: Դիմեցինք ՀՀ ԳԽ ՀՌԱԿ խմբակցության նախագահ Վիգեն Խաչատրյանին: «Նիստերը իրավազոր համարելու անհրաժեշտ քվորումի հարցը խորհրդարանը կարողացավ լուծել եւ ՀՀ ԳԽ օրենքի 4-րդ հոդվածում կատարվեց փոփոխություն, ասաց նա: Այժմ այն հաշվարկվում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցված պատգամավորների թվից, որի կեսից ավելին այսօրվա դրությամբ կազմում է 121 մարդ: Վեճի հիմնական առարկան որոշումներ եւ օրինագծեր ընդունելու եւ հանրապետության նախագահի «վետոները» հաղթահարելու համար անհրաժեշտ ձայների քանակի սահմանումն էր: Ըստ գործող օրենսդրության, որպեսզի հանրապետության նախագահը սխալված լինի պատճառից հեռացնել խորհրդարանի կողմից անվստահության արժանացած կառավարության անդամին, անհրաժեշտ էր, որ կողմ քվեարկի պատգամավորների ընդհանուր թվի 2/3-ը՝ 174 ձայն: Առաջարկվում էր այդ սահմանագիծը իջեցնել 121-ի կամ 131-ի: Այս թվերի շուրջն էլ բախվեցին կարծիքներն ու շահերը:

Ինչ վերաբերում է նոր ընտրություններ անցկացնելու առաջարկություններին, որով համառորեն հանդես է գալիս ԳԽ ՀՀՇ-ի խմբակցությունը, առայժմ դա առաջին հերթին գալիս է նրանից, որ քաղաքական այդ ուժը կորցնելով իր ազդեցությունը Գերագույն խորհրդում եւ ընտրողների շրջանում փորձում է բացահայտ կամ քողարկված մեթոդներ կիրառելով պահպանել իր թեկնածուների դերը: ■

Ճակատ

ԱՂԴԱՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՆՈՐ ԿՐԱԿՈՑՆԵՐ

Կրկին հրետակոծվում է Ստեփանակերտը

Ինչպես Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից **Վահրամ Աղաջանյանը**, խաղաղությունը Լեռնային Ղարաբաղում շարունակում է մնալ լարված: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շտաբի տվյալներով, ադրբեջանական բանակը նոր հեռահար թնդանոթներ է տեղադրել Աղդամի շրջանի տարածքում, որոնցից դեկտեմբերի 1-ի երեկոյան ժամը 19:15-ին ուժգին հրետակոծության են ենթարկվել Ասկերան քաղաքն ու շրջանի Խանաբադ գյուղը: Տուժածներ չեն եղել: Կան մասնակի ավերածություններ: Նշված կրակակետերը լռեցնելու նպատակով ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը դիմում են պատասխան գործողությունների:

Երեկ ժամը 13:25-ին Ադրբեջանի Աղդամի շրջանի տարածքից հեռահար թնդանոթներից հրետակոծվել է Ստեփանակերտը: Քաղաքի վրա արձակվել է 5 արկ: Հետեւանքները ճշտվում են: Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղի ուղղությամբ դիրքային մարտեր են ընթանում: ԼՂՀ ռազմաճակատի մյուս հատվածներում իրադրությունը մնում է անփոփոխ:

Իր հերթին «Սնարֆ» գործակալությունը տեղեկացնում է, թե մարտական գործողություններում լարվածությունը պահպանվում է Լաչինի մարդասիրական միջանցքի հատվածում, որտեղ դեկտեմբերի 1-ին ադրբեջանական կազմավորումները գնդակոծել են ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի պաշտպանական դիրքերը: Գնդակոծությունների հետեւանքով միջանցքի հյուսիսային մասում գտնվող Տիգիկ գյուղի հայկական ինքնապաշտպանական ուժերի մարտիկներից մեկը վիրավորվել է:

Նույն օրն ադրբեջանական կազմավորումները հարուցիչներից հրետակոծել են Մարտունի շրջկենտրոնը եւ շրջանի Բերդաշեն գյուղի հայկական պաշտպանական դիրքերը:

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտնում է, որ Լաչինի միջանցքի հյուսիսային մասերում հայկական կազմավորումների հաջող մարտական գործողությունների պատճառով ադրբեջանական զորքերը ստիպված են եղել բողնել Տիգիկը և մի շարք այլ բնակավայրեր: Նույն գերատեսչությունը տեղեկացնում է նաեւ, որ Ղարաբաղի տարածքից հրետակոծվել են Ադրբեջանի Աղդամ եւ Ֆիզուլի շրջկենտրոնները: Տուժածների մասին տեղեկություններ չեն հայտնվում:

Ղարաբաղի «Նորություններ» գործակալության տվյալներով, ադրբեջանական օդուժի ռազմական ինքնաթիռը ռմբակոծել է Լաչինի մարդասիրական միջանցքի հայկական պաշտպանական դիրքերը: Տուժածներ չկան: Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը գործում է անխափան: ■

Ղարաբաղի կարգավիճակի հարցը միայն զինադադարից հետո

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի իշխանություններն ամբողջովին վերահսկում են իրենց զինված ուժերի գործողությունները եւ պատրաստ են դադարեցնել կրակը, այստեղ է հայտարարել դեկտեմբերի 2-ին Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ՄԱԿ-ի ներկայացուցիչներ Օմար Հալիմի եւ Հորտս Հայթմանի հետ հանդիպման ժամանակ: Լեւոն Տեր-Պետրոսյանը Բաքվից ժամանած ՄԱԿ-ի ներկայացուցիչներին նաեւ հայտնել է, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը կքննարկվի միայն մարտական գործողությունների դադարեցումից հետո:

Հայաստանի նախագահը նշել է, թե նախկինում էլ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դրականորեն են վերաբերել Մարիո Ռաֆայելլիի եւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի այն առաջարկին, որի համաձայն պետք է դադարեցվեր կրակը, սակայն Ադրբեջանը մինչեւ այսօր պահպանում է լռություն: Լեւոն Տեր-Պետրոսյանը մատնանշել է ՄԱԿ-ի եւ ԵԱՀԽ-ի, ինչպես նաեւ այլ միջազգային կազմակերպությունների խաղաղասիրական գործունեությունը: ■

Աննախադեպ լռություն

Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական կենտրոնից հաղորդում են, թե նախորդ գիշեր եւ երեկ առավոտյան իրադրությունը Հայաստանի սահմանամերձ շրջաններում հանգիստ է եղել: Ինչպես տեղեկացանք Տաուշի շրջանից, դեկտեմբերի 1-ի երեկոյան Ադրբեջանի տարածքից առանձին ավտոմատային կրակահերթեր են հնչել շրջանի սահմանամերձ Մովսես գյուղի եւ հայկական պաշտպանական դիրքերի ուղղությամբ: Տուժածներ չկան:

Դեկտեմբերի լույս 1-ի գիշեր եւ երեկ փաստորեն հայ-ադրբեջանական սահմանում զինադադարի խախտման որեւէ դեպք չի արձանագրվել: ■

Լեռնարա

Ղարաբաղի մասին փաստաթղթեր Բաքվին

Բաքվում հանրապետական մամուլը հայտնում է, թե Անկարան Բաքվին է հանձնել Ղարաբաղի Ադրբեջանին պատկանելու վերաբերյալ արխիվային փաստաթղթեր: Այս տարի Թուրքիայում վերահրապարակված փաստաթղթերն ընդգրկում են Ադրբեջանի պատմությունը 15-րդ դարից մինչեւ 1914 թ.: Սրանց մեջ է բյուրեղական երկրների մասին տեղեկատուն «Ադրբեջանի պատմություն» լիակատար մատենագրությամբ, ղարաբաղյան առնչակատումների նկարագրություններով: ■

Բանակցություններ. Աղագա հույսեր

«Աղագայում ես չեմ բացառում Ադրբեջանի եւ ԼՂՀ-ի միջեւ ուղիղ բանակցությունների հնարավորությունը», «Սնարֆ»-ին հայտարարեց ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի նախագահի արտաքին քաղաքական հարցերով խորհրդական Արկադի Ղուկասյանը: Նրա կարծիքով, Ադրբեջանի ղեկավարությունը վաղ թե ուշ պետք է գիտակցի, որ ղարաբաղյան հարցի կարգավորումը ռազմական եղանակով անհնարին է: Դրանից բացի Ղուկասյանը գտնում է, որ Ադրբեջանում պատերազմը հեղինակություն չի վայելում եւ օր-օրի ավելի դժվար է դառնում ուժերը կենտրոնացնելը:

Խոսելով բանակցությունների մեխանիզմի մասին, Ղուկասյանն այն կարծիքին է, որ սկզբում անհրաժեշտ է հանդիպում կազմակերպել երկու կողմերի ներկայացուցիչների միջեւ, որոնք էլ կգրաղվեն երկու կողմերի ղեկավարների հանդիպման նախապատրաստությամբ: Երկկողմանի բանակցությունների հավանականությունն ավելի կմեծանա, երբ Ադրբեջանը կկորցնի իր ռազմական առավելության զգացողությունը, շեշտեց Ղուկասյանը: ■

Թուրքիա-Հայաստան

ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԴԵՌ ՉԻ ՍԿՍՎԵԼ

Ինչպես «Նոյյան տաղան» գործակալությանը հայտնի է դարձել «Հայէներգո» վարչությունից, Թուրքիայից Հայաստան էլեկտրաէներգիայի մատակարարումը նախատես հրադադարակված ծրագրին հակառակ, դեկտեմբերի 1-ի դրությամբ դեռեւս չի սկսվել: ՀՀ կառավարության մամուլի ծառայության ներկայացուցիչը հաղորդել է, որ դա բացատրվում է մի շարք հարցերի, մասնավորապես՝ ֆինանսական, անկարգավորվածությամբ: «Հայէներգո»-ից հաղորդեցին նաեւ, որ Թուրքիայից Հայաստան փոխանցվելիք 30 ՄՎտ էլեկտրաէներգիան կազմում է Հայաստանի ներկայիս էներգետիկական կարողությունների 5-տոկոսից էլ փոքր մասը: ՀՀ նախագահի մամուլի ծառայության ներկայացուցիչը հերքել է Թուրքիայի պաշտոնական անձանցից հղված այն հաղորդումը, թե իբր Թուրքիան քաղաքական պահանջներ է ներկայացրել, մասնավորապես Ղարաբաղի հետ առնչված, էլեկտրաէներգիայի փոխանցմանը համաձայնություն տալու համար: *«Նման պահանջներ չեն եղել»*, հայտարարել է նա: ■

Միջազգային

Ամերիկյան 18 հազար ծովայիններ կիասնեն Սոմալի

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը գործեց անսովոր արագությամբ. երեկ լիազորվեց շուրջ 40 հազարանոց ռազմական ուժի առաքումը Սոմալի, կանգնեցնելու համար միջազգային օգնության կողոպուտը եւ աղաղակելու նոպաստամատույց կազմակերպությունների անխափան աշխատանքը միլիոնավոր բնակիչներին տովամահությունից փրկելու գործում: Այդ հարցում արտակարգ փութաջանություն դրսեւորեց Մ. Նահանգները, դարձյալ մտնելով «միջազգային ոստիկանի» դերի մեջ: Ինչպես հայտնի է, միջազգային ուժերի գերակշիռ մասը՝ շուրջ 30 հազար զինծառայող գնալու է ամերիկյան բանակից, որի 18 հազար ծովայինները վաղը կիասնեն մայրաքաղաք Մոգադիշո: Հայտնի է նաեւ, որ Վաշինգտոնը պնդում է, որպեսզի Սոմալիում իր գործը չենթարկվի ՄԱԿ-ի հրամանատարությանը: Երեկ Անվտանգության խորհրդի նիստի շրջանակներում գտնվեց նաեւ այդ հարցի «փոխզիջումային» տարբերակը՝ ամերիկյան զորաբաժինը գործելու է ամերիկյան հրամանատարության ներքո, որն իր հերթին սերտ համագործակցության մեջ է լինելու ՄԱԿ-ի հրամանատարության հետ:

Գերմանական մարկը փորձում է օգնել Ֆրանկին

Եվրոպական սակարաններում երեկ դարձյալ իրականացում էր. համակարգի կարեւոր անդամներից Ֆրանսիական ֆրանկը զգալի անկում կրեց գերմանական մարկի եւ այլ դրամանիշների նկատմամբ: Ֆրանկին օգնության հասավ Բունդեսբանկը, որն սկսեց տարբեր շուկաներում իր նախատեսված սակով գնել մեծաքանակ ֆրանկ, այն հետագա անկումից փրկելու համար: Գործարքին արձագանքեց կանգլեր Քոլը, որն այն ներկայացրեց որպես լավագույն օրինակ եվրոպական համագործակցության, եւս մեկ անգամ շեշտելով Մաաստրիխտի պայմանագրի անհրաժեշտությունը, ինքնադատության բաժին հանելով բրիտանական չկամ շրջանակներին եւ դանիացիներից պահանջելով վերաստեղծության ենթարկել իրենց «ոչ»-ը:

Ականված ինքնաշարժ Իրաքյան Սուլեյմանիայում

Երեկ ականված ինքնաշարժ պայթեց Իրաքյան Քրդիստանի Սուլեյմանիա քաղաքի փողոցներից մեկում, սպանելով 1 եւ վիրավորելով 19 հոգու: Քրդական աղբյուրներն իսկույն մեղադրեցին Իրաքյան կառավարությանը, որ «այդ ձեւով ձգտում է հաշվեհարդար տեսնել Իրաք ժողովրդի ինքնորոշման հետ»: Նույն աղբյուրները հիշեցրին, թե վերջերս շատացել են նման արարքները Իրաքի Իրաքյան շրջաններում: Շուրջ 3 շաբաթ առաջ Իրբիլ քաղաքում ականից պայթել էր ՄԱԿ-ի նոպաստամատույց ծառայությանը պատկանող մի բեռնատար:

ԱՄՆ-ը վերահավատում է իր զենքերն Աֆղանստանում

Մ. Նահանգները ներկայումս բարձր գներով վերահավատում է ժամանակին Աֆղան մուջահեդներին տված իր զենքերը, առաջին հերթին՝ ցամաք օդ «Սթինգեր» տիպի հրթիռները: 1980-ական թվականներին խորհրդային օդուժի սարսափը դարձած այդ հրթիռները CIA-ի գործակալների կողմից վերագնվում են մոտ 40 հազար դոլլարով, մինչդեռ նրանց իրական գինը չի անցնում 20 հազարից:

digitised by A.R.A.R.@

Թուրքմենստան

Ամեն ինչ Հայաստանի գազամատակարարման համար

Նոյյան տաղաւ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջոցեսական տնտեսական կառերի բաժնի գլխավոր մասնագետ Ավետիք Սարգսյանը հաղորդեց, թե ՀՀ նյութական ռեսուրսների նախարարության նախաձեռնությամբ Հայաստանի եւ Թուրքմենստանի նախարարությունների մակարդակով տեղի են ունենալու բանակցություններ: Օրերս Թուրքմենստանից ժամանում է մի մեծաքիվ ղեսվիրակության (մոտ 35 մարդ) ժամանումը Երեւան: Ամրագրա բանակցությունների հիմնական նպատակը Հայաստանից Թուրքմենստան առաքվող ապրանքների ծավալի հստակեցումն է: Բանն այն է, որ Հայաստանից Թուրքմենստան առաքվող արտադրանքի ծավալը դրամական արտահայտությամբ չի ծածկում Հայաստան առաքվող գազի արժեքը: Այդ ֆինանսական խզումը դատճառը շրջափակման հետեւանքով առաջացած բերացումներն են առաքման բնագավառում: Ավետիք Սարգսյանի կարծիքով, Հայաստանը հնարավորություն ունի փակել դարտերը, ինչը սակայն անիրականանալի է շրջափակման դատճառով: Հոկտեմբերի 15-ին Թուրքմենստանի հետ կնքված առեւտրա-տնտեսական դայմանագիրը ենթադրում է ֆիրինգային հիմունքներով հաշվարկների անցկացում, որը դժվար իրականանալի է շրջափակման մեջ գտնվող դատերազմող երկրի համար: Հայկական կողմը ֆինանսական խզումը ծածկելու համար նախատեսում է բուրքմենական դատվիրակությանը ներկայացնել մեր արտադրանքի ընդլայնված ցանկը: Սակայն չնայած բոլոր դժվարություններին եւ դարտերին, որոնք հայկական կողմը դարտավորվել է մուծել, *«Թուրքմենստանը ձեռք է առնում բոլոր միջոցները Հայաստանի անխափան գազամատակարարումն ապահովելու համար»*, հայտարարեց Ավետիք Սարգսյանը: ■

Նախնական բանակցություններն ընթացքի մեջ են

Ինչպես հայտնի է դարձել «Նոյյան տաղաւ» գործակալությանը, Հայաստանի Հանրապետության եւ մերձբալթյան 3 հանրապետությունների միջեւ կառավարական մակարդակով նախնական բանակցություններ են ընթանում առեւտրա-տնտեսական համաձայնագրերի ստորագրման վերաբերյալ, որն ի կատար կածվի, ինչպես նախատեսված է, դեկտեմբերի կեսերին: ■

Ռուսաստան

Ես քեզ, դու ինձ

Հայաստանն ու Ռուսաստանը դայմանավորվել են մասնաբաժիններ հատատել: ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջոցեսական տնտեսական կառերի բաժնի դետի տեղակալ Էդուարդ Տեր-Օհանովը հայտնեց, որ նոյեմբերի 25-ին Դաշնակցային Ռուսաստանի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ արձանագրություն է ստորագրվել 1993 թվականին 2 երկրների միջեւ առեւտրա-տնտեսական համագործակցության մասին համաձայնագրի իրականացման վերաբերյալ: Այդ համաձայնագիրը կնքվել էր դեռեւս սեղտեմբերի 30-ին:

Ռուսաստանը եւ Հայաստանը փոխադարձ համաձայնություն են ձեռք բերել արտադրանքի արտահանումը բույլատրող մասնաբաժինների հատատման վերաբերյալ, ի կատարումն 1 եւ 2 հավելվածների:

Հայաստանը դարտավորվում է Ռուսաստան առաքել գունավոր մետալուրգիայի, քիմիական եւ նավթաքիմիական արդյունաբերության արտադրանք, այդ թվում՝ կաուչուկ, կարբիտ, քացախաթթու եւ այլն: Հայաստանը Ռուսաստան կառաքի նաեւ մեքենաշինության ու մետաղամշակման արտադրանք հատոցներ, ուժային տրանսֆորմատորներ, դոմդեր, կոմդրեսորներ եւ ավտոճեռենաներ: Թեթեւ արդյունաբերության արտադրանքը ներկայացված է գուլպեղենի եւ տրիկոտաժի արտադրանքով: Հայաստանը Ռուսաստան է առաքելու նաեւ գինի եւ կոնյակ: Իսկ Ռուսաստանը դարտավորվում է Հայաստանին տալ նավթամշակման (ջեռուցման համար նախատեսված մազութ, բենզին, այդ թվում՝ ավտոմոբիլային, դիզելային վառելիք, ինչպես նաեւ ավիացիոն ու դիզելային յուղ), քիմիական, անտառային եւ փայտամշակման արդյունաբերության արտադրանք եւ գունավոր մետաղներ: Սննդամթերքից Ռուսաստանը դարտավորվել է Հայաստան ուղարկել ձկնեղեն, մնացյալ սննդամթերքը Ռուսաստանը չի լիցենզավորում եւ քվոտայի չի ենթարկում: ■

Սացե՞լ է արդյոք Լեւոն Տեր-Պետրոսյանը Ստեփանակերտ այցելելու իրավեր

ՀՀ նախագահի լրատվական ծառայությունից «Նոյյան տաղաւ» գործակալությանը հայտնեցին, որ իրավերը չի կարող դատասոնական համարվել, քանի որ տեքստը կնքված չէ: Հարկ է նշել նաեւ, որ Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը դեռեւս ոչ մի անգամ չի եղել Լեռնային Ղարաբաղում:

Ադրբեջան

Էլչիբեյը քեմդեւիդի տիդի խաղաղության կողմնակից

«Ազատություն» ռադիոկայանը հաղորդում է, որ Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյն ամերիկյան «Քրիչըն սայնս մոնիտոր» թերթի թղթակցի հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, որ դարաբաղյան հիմնահարցի հանգուցալուծման լավագույն ճանապարհը քեմդեւիդյան տիդի խաղաղության դայմանագրի կնքումն է Հայաստանի հետ: Նա գտնում է, որ եւ ինքը, եւ Հայաստանի նախագահը առավել մոտ են կանգնած նման դայմանագրի կնքմանը, սակայն ագրեսիվ շրջադատը բույլ չի տալիս իրականացնել այն:

Հարկման նոր օրենքներ

Ադրբեջանում նախատեսվում է մտցնել հարկման նոր օրենքներ: Դրանց համաձայն հարկման կենթարկվեն նվիրատվության, ժառանգության ձեւակերդումը, ինչպես նաեւ հանրապետության բնադաբարների վաճառքից ստացվող շահույթը: Տվյալ հարկը, որը համաբխարհային դրակտիկայում կոչվում է «բագավորական», այսօրվա դրությամբ, հանրապետության ֆինանսների նախարարության դատասխանատու աբխատակիցներից մեկի կարծիքով, անհրաժեշտ է Ադրբեջանում արտասահմանյան հսկա նավթաֆիրմաների ծավալած գործունեության կադակցությամբ:

Բնակարանների անհատույց սեփականաշնորհում

Ներկա դահին Ադրբեջանում մշակվում է սեփականաշնորհման ծրագիրը, որը նախատեսում է բնակարանների անհատույց սեփականաշնորհում: Բաքվի քաղաքագլուխ Ռաուֆ Գյուլմամեդովի խոսքերով, առաջին հերթին կսեփականաշնորհվեն առեւտրի, հասարակական սննդի եւ կենցաղային սպասարկման օբյեկտները: Ծրագրի համաձայն, մայրաքաղաքի բնակիչները կստանան հող գնելու եւ առանձնատներ կառուցելու իրավունք: Քաղաքապետարանը մտադիր է առավելությունը տալ ցածրահարկ կոմոթեռաթիվ բենքերի կառուցմանը: Ընդ որում, հիմն ու առաջին հարկը կկառուցվեն տեղական իշխանությունների հաշվին եւ վարձակալության կտրվեն մասնավոր սեկտորին, առեւտրին, հասարակական սննդին եւ կենցաղային սպասարկման օբյեկտներին:

Ադրբեջանն իսլամական ԱԱՊ-ի խորհրդաժողովի անդամ

Ադրբեջանի առեւտրաարդյունաբերական դալատը դարձել է իսլամական երկրների համաշուն կազմակերդության խորհրդաժողովի անդամ: Ինչպես «Խաբար-սերվիս» գործակալությանը հայտնեց հանրապետական դալատի նախագահ Քյամրան Հուսեյնովը, սդ որոշումն ընդունվել է իսլամական երկրների առեւտրաարդյունաբերական դալատների նոյեմբերի 17-29-ը Թեհրանում կայացած ընդհանուր ժողովում: ■

ՀՀ

Գեորգի Պետրոսյան. «ԼՂ-ում երկխոսության մասին խոսակցություններն անհիմն են»

Սևարտ: «Նրանք, ովքեր շահագրգռված են Ղարաբաղում երկխոսության գոյությամբ, լուրեր են տարածում իբր ԼՂՀ ԳԽ-ի եւ Պաշտպանության դետական կոմիտեի միջեւ տարաձայնություններ կան», երեկ հայտարարեց ՀՀ ԳԽ նախագահի դաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը:

ՊՊԿ-ն ստեղծվել է նախագահության հրամանով, ասաց Պետրոսյանը: Այս քայլը դայմանավորված է ԼՂ-ի խաղաղ ազգաբնակչության դեմ Ադրբեջանի ագրեսիայով: Նա նշեց, որ ՊՊԿ-ին տրված իրավասությունները հնարավորություն կտան ավելի արդյունավետ դիմակայել Ադրբեջանին:

Այնդես էր ՀՀ ԳԽ նախագահությունն եւ ՊՊԿ-ի միջեւ հարաբերությունները այնդարսին են, ինչդիսին ընդհանրապես լինում են ցանկացած անկախ երկրում օրենսդիր եւ գործադիր մարմինների միջեւ, շեշտեց Գեորգի Պետրոսյանը:

ԼՂՀ Մարտակերտի շրջանի տարածքում խոշոր եղջերավոր անասունի կորուստը կազմել է 10 հազար գլուխ: Ինչպես հաղորդել է «Նոյյան տաղաւ» գործակալության թղթակիցը Ստեփանակերտից, նահանջի ժամանակ միայն ԼՂՀ Մարտակերտի շրջանում հայադատական խոշոր եղջերավոր անասունի կորուստները կազմում են 10 հազար գլուխ: Ի հավելումն դրա, 7 հազարից ավելին կազմում են մաքր եղջերավոր անասունները եւ 4 հազարից ավելին խոզեր: Մնացած 2800 խոշոր եղջերավոր անասունի մի մասը կորել է գաղթի ճանադարհին, մյուս մասը տրված է ի դահ ՀՀ եւ ԼՂՀ մի շարք շրջաններում: Հարկ է նշել, որ դեռեւս մինչեւ ԼՂՀ տարածքի մի մասի բռնազավթումը, ավազակային հարձակումների եւ անասնագողության հետեւանքով հայկական կողմը կորցրել է եւս 10 հազար գլուխ անասուն: Խոսքը միայն դետական տնտեսություններին դատկանող անասունի մասին է, ինչ վերաբերում է անհատ գյուղացիների կրած կորուստներին, ապա դրանց ճշգրիտ գլխաքանակը անհնար է որոշել: Սա բալանված անասունների քանակը: Հսկայական է գյուղատնտեսական տեխնիկայի, մեքենաների եւ անձնական սեփականության կորուստը: ■

Ընդդիմություն

«Ազգային դաշինքը» Սահմանադիր ժողովի է կոչում

«Ազգային դաշինք»-ի մեջ միավորված Հայաստանի վեց կուսակցություններ դեկտեմբերի 1-ին հանդես են եկել մի հայտարարությամբ, որով կոչ են անում անհապաղ հրավիրել Սահմանադիր ժողով: «Շահարկելով «խաղաղություն ամեն գնով» կարգախոսը, իշխանությունները դատրաստվում են Արցախը զոհաբերելու գնով «կարգավորել» իրենց հարաբերությունները Ադրբեջանի հետ», ասվում է հայտարարության մեջ: Հայաստանի ընդդիմության խոր համոզմամբ, ներկա իրավիճակի համար անմիջականորեն դատասխանատու են հանրապետության նախագահն ու նրա վարչակազմը:

«Սահմանադրության ընդունումով միայն կորոշվի Հայաստանի Հանրապետությունում դետական համակարգը, շարունակում է հայտարարությունը, քաղաքական կարգավիճակը, որով կհաստատվի ժողովրդավարությունը եւ կայուն երաշխիքներ կստեղծվեն անձի ազատության եւ իրավունքների դատասդանության համար»:

Հայտարարությունից հայտնի է դառնում նաեւ, որ «Ազգային դաշինք»-ը վերակազմավորվում եւ շարունակում է իր գործունեությունը, «նդատակ ունենալով Սահմանադիր ժողով հրավիրելու գաղափարի շուրջ համախմբել ազգի կենսունակ բոլոր ուժերը, համոզված, որ միայն այս ճանադարհով հնարավոր է կանխել վերահաս աղետը եւ հասնել քաղաքական, տնտեսական արմատական փոփոխությունների»:

Հիշեցնենք, որ նախադես «Ազգային դաշինք»-ը խորհրդարանական միություն էր եւ առավել աշխույժ գործում էր սեդտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, երբ դահանջում էր նախագահի եւ վարչակազմի հրաժարականը: Սակայն ներքին տարաձայնությունների դատճառով, ռամկավարների եւ դաշնակցականների հեռանալուց հետո, այն զգալիորեն բուլացավ եւ կորցրեց իր կշիռը խորհրդարանում եւ հասարակական կյանքում: Այժմ այն խորհրդարանական միությունից վերածվել է միջկուսակցականի եւ իր մեջ համախմբում է ԱԺՄ, ԱԻՄ, ՍԻՄ, ՀՔԺՄ միություններին, Հայաստանի դեմոկրատական եւ Հայաստանի հանրապետական կուսակցություններին: ■

Հենրիկ Իգիթյան. «Իմ նախագահը տեր Ասվածն է»

«Ես նախագահ չռանեմ: Իմ նախագահը տեր Աստվածն է», Հայաստանի դեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ նրա վարած քաղաքական կուրսի նկատմամբ իր վերաբերմունքն այսդես արտահայտեց նեխկին ԽՍՀՄ ժողովրդական դատգամավոր Հենրիկ Իգիթյանը: Դեկտեմբերի 1-ի երեկոյան Երեւանում նույդ ունենալով գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի եւ «Գոլոս Արմենիի» անկախ թերթի խմբագրության կազմակերդած երեկույթում, նա վստահություն հայտնեց, որ Հայաստանը միշտ դետք է կոմունորզվի դեղի Ռուսաստան: «Մենք չդետք է կորցնենք բարեկամին», ընդգծեց Իգիթյանը, դա համարելով իր հայրենիքի վերածնման դարտադիր դայման:

Երեկույթին ներկա էր Երեւանում Ռուսաստանի արտակարգ եւ լիազոր դեսդան Վլադիմիր Ստուդիտինը: ■

«Պատերազմը վարելու համար դետք է կայուն քաղաքականություն»

Այսդես հայտարարեց երեկ կայացած մամուլի ասուլիսում Հայ հեղափոխական դաշնակցության Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Հրայր Կարապետյանը:

Նա նշեց, որ ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ շիշ չի լինի խորհրդարանի ցրումը, քանի որ չկա սահմանադրություն եւ այլ օրենսդրական մարմին, որը կարողանար փոխարինել խորհրդարանին: Փոխարենը, դարոն Կարապետյանի կարծիքով, հանրապետության նախագահը դետք է հաշվեսվությամբ հանդես գա խորհրդարանում, որից հետո դետք է գնահատական տվի նրա վարչակազմի գործունեությանը, այնուհետեւ դետք է անցկացվեն նոր ընտրություններ եւ Սահմանադիր ժողովի միջոցով դետք է ստեղծվի հիմնական օրենքը Սահմանադրությունը:

Պրն. Կարապետյանի ասելով, ՀՅԴ-ն կողմ է դեկավարման վարչապետական կամ խորհրդարանական ձեւին:

Մեր այն հարցին, թե ինչպես կվարվեր ՀՅԴ-ն, եթե իշխանության դեկին լիներ եւ դրված լիներ վրաց-աբխազական եւ ադրբեջանական ճանադարհների ադաբրջափակման խնդիրը, դրն. Կարապետյանը դատասխանեց, որ թեեւ երկկողմ շրջափակում է, բայց հակակշիռ ստեղծելու համար Հայաստանն ուներ մեր տարածքով շրջափակված Նախիջեւանի եւ Վրաստանի դեդքում Ջավախքի տարածքը, որոնց գործոնները կարող էին շահարկվել: Ըստ դրն. Կարապետյանի, առաջինը Դաշնակցության ներկայացուցիչներն են մեկնել Արխազիա, որին հաջորդել են իշխանության դատվիրակությունները: Այն ժամանակ աբխազները խոստացել են աջակցել, իսկ Հայաստանի դատասդանական դատվիրակությունը տեղ է հասել ոչ միայն ուշացումով, այլեւ բռնել է հակառակ դիրքորոշում: *«Արմատաղես սխալ են եղել մեր հարաբերությունները Վրաստանի հետ եւ այդ հարցում մենք դետք է խոսեինք ուժի դիրքերից»*, ասաց դրն. Կարապետյանը: Այնուհետեւ նա հստակորեն հայտարարեց, թե մենք չդետք է *«երես տայինք Վրաստանին»*:

Պրն. Կարապետյանը ժխտեց նաեւ «մարուխյանական բեւի» գոյությունը ՀՅԴ շարքերում, իսկ իր բյուրոյի անդամ չընտրվելու փաստը մեկնաբանեց Ընդհանուր ժողովի ընտրության արդյունքներով, ուր բյուրոյի անդամ են ընտրվել 2/3-ից ավելի ձայն ստացողները: Ա. Հ.

Ֆրանսիական հեղինակավոր Le Dossier d'Archéologie («Հնագիտության թղթածրար») ամսագրի վերջին համարն ամբողջությամբ նվիրված է Հայաստանին, նրա դատմական հուշարձաններին, «Հայաստան. 3 հազար տարվա դատմություն» ընդհանուր խորագրի տակ:

Ղարաբաղ

Նախիջեւան-Մեղրի-Զանգելան գիծը չի գործում Ադրբեջանի մեղքով

Ինչպես ՆՏ-ի թղթակցին հայտնեց Հայաստանի կառավարության լրատվական ծառայության դեկավար Վլադիմիր Մանոյանը, երկաթգծի Մեղրու հատվածը դատրաստ է շահագործման եւ հայկական կողմից ոչ մի խոչընդոտ չկա աբխատանքը վերսկսելու համար: Ամբողջ հարցն այն է, որ Ադրբեջանը չի ուզում ադաբրջափակել ճանադարհը: ■

digitised by A.R.A.R.@

Ազգային Եկեղեցի

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԵՐՔՈՒՄԻՆ՝ ՌԱԿ-Ի ԽՕՍՔԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիւանին կողմէ հրաւարակուած հերմնագիրը, որ կը վերաբերէր ռամկավար ազատական մամուլին համար արտատպուած ընկեր Երուանդ Ազատեանի «Նոր Խօսք. Հայրական Խօսքի Փոխարէն» նշանակալից յօդուածին, դուռը լայն բացաւ լրագրական բանավէճի մը առջեւ, մերթ լուրջ եւ մերթ անլուրջ թեր ու դէմ արտայայտութիւններով:

Ընկ. Ազատեան ամենայն իրազեկութեամբ եւ ուրցաւութեամբ իր յօդուածին մէջ նոր լուսարձակի տակ կ՚առնէր Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ կացութիւնը, դերը, ներեկեղեցական ու միջեկեղեցական հարցերը, հիմնական շեշտը դնելով բոլոր մարզերու մէջ անհրաժեշտ վերատեսութիւններու եւ վերափոխումներու վրայ:

«Նոր Խօսք. Հայրական Խօսքի Փոխարէն» յօդուածին գրութեան տեղի կու տար Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ.-ի համատեղ ստորագրութեամբ լոյսին ելած «Հայրական Խօսք»ը, որ կը շեշտադրուէին Հայաստան աշխարհի մէջ Հայ Առաքելական Եկեղեցիին տաղտնացող աղանդաւորական եւ այլ կարգի վտանգները, մասնաւոր ընդգծումի եւ դատապարտումի ենթարկելով կաթողիկէ հայոց Կաթողիկոս-Պատրիարք Յովհաննէս Պետրոս ԺԸ-ի «Վերադարձ Հայաստան» շրջաբերական թուղթն ու անով արտաբերուող ծաւալապաշտական ոգի մը, որ անյարիր է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի կողմէ միջեկեղեցական յարաբերութիւններու գծով որդեգրուած սկզբունքներուն:

Կասկածէ վեր է, թէ Պաղեստինեան եւ Աւեստարանական Եկեղեցիները Խորհրդային Միութեան քայքայումին եւ Արեւելեան Եւրոպայի քաղաքական վերազարթնումին մէջ քարոզչական արշաւի լայն ասպարէզ մը գտան եւ ուզեցին շահագործել ու առաւելագոյնս կը շահագործեն դպահը:

Մեզի համար նաեւ կասկածէ վեր է, թէ Հայ Կաթողիկէ եւ Աւեստարանական Եկեղեցիներու Հայաստան աշխարհի մէջ ծաւալած նոր գործունէութիւնը միայն երկրաշարժի հետեւանքներու դարմանումով չի սահմանափակուիր եւ կը հետապնդէ իրենց երթեմնի դաւանակիցներուն հոգեւոր սպասարկութենէն անդին անցնող ու համաշխարհային շարժումներու դարուն մէջ ինկող նոպատակներ...: Բայց դպասկերը տարբեր շրջանակի մը մէջ դնելով, արդեօ՞ք նոյնը չէ դարագլուխ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որուն փութաջան ներկայութիւնը եւս Հայաստանի մէջ չի սահմանափակուիր Աղէտի գօտիին հոգ տանելու եւ Աստուծոյ Բանին կարօտ հաւատացեալներու հոգեւոր սնունդ ջամբելու ծիրով...:

Ամէն դարագլխի, մենք արդար, առողջ, տեղին ու ողջունելի կը գտնենք Հայ կաթողիկէ եւ Աւեստարանական Եկեղեցիներու «վերադարձը» Հայաստան աշխարհ, այնքան ատեն որ ան չի վերածուիր մարդորսութեան եւ անոր ազգային նկարագիրը չի հակադրուիր Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ ազգային նկարագրին, որ արգասիք է բազմադարեան հոլովոյթի մը ու հոգեկան խարիսխի դեր է կատարած հայուն համար, դարեր շարունակ:

Բայց մեր ներկայ խօսքին նիւթն են վերը ակնարկուած «Հերքում»ը եւ Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցին, կարճ՝ Հայց. Եկեղեցին, որ կը կազմէ մեր հիմնական մտահոգութեան առարկան՝ ազգային-եկեղեցական դարուն մէջ:

Նախ կ՚ուզենք որոշ վերապահութեամբ ողջունել «Հերքում»ով ներկայացող երկու երեւոյթ: Առաջին, որ Մայր Աթոռի դիւանը մօտ օրերս դիտի հրապարակէ ճշգրիտ տուեալներ՝ վերջին երեք տարիներու ընթացքին Մայր Աթոռին եւ ներքին թեմերու իրագործումներուն ու գործունէութեան մասին: Երկրորդ, որ Մայր Աթոռի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ի նախագահութեամբ հրապարակում մը կատարած է Հայց. Եկեղեցւոյ վերաբերող հարցերու մասին, հոգ չէ թէ յօդուածի մը կաղապարութեամբ, երբ տակաւին շատ մօտիկ անցեալին լռութեան դատապարտուած կը մնային ծանրակշիռ հարցեր, ինչպիսիք են՝ նոր թեմերու հաստատում, թեմերու գրաւում, համազօր կաթողիկոսութեան մը հռչակումը, եւն.:

Կ՚ըսենք որոշ վերապահութեամբ, անոր համար որ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը կը թուի թէ տակաւին չէ կրցած ամբողջովին բորբոքել խորհրդային շրջանին ձեւաւորուած կաղապարներ, որոնց խօսքն մէկ աղագոյցն է «ներքին թեմեր» եզրին գործածութիւնը «Հերքում»ին մէջ...:

Ասկէ դուրս, «Հերքում»ը դարզուցէ վկայաբուղթն է տխուր իրականութեան մը: Այն՝ թէ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի հերքմնագիրը մշակող անդամները յստակ կերպով չեն ընկալեր կամ չեն ուզեր ընկալել իրականութիւնը, եւ կամ շեշտ կերպով. չեն՝ նայիր կամ չեն ուզեր նայիլ անոր:

Այլապէս, անոնք՝

– Պիտի հաստատէին, թէ Հայց. Եկեղեցւոյ ծոցին մէջ «սովետական իշխանութեանց շրջանում» իրենց ակնարկած հարցերը առաջացած են՝ աւելի ճշգրիտ բանաձեւումով մը՝ ցուրտ դպատերազմի շրջանին, հիմնականին մէջ արեւմտեան ուժերու եւ անոնց Հայ կամակատարներուն մեքենայութեամբ, կնճռահայութեամբը Լիբանանի երթեմնի նախագահ Քամիլ Շամունի եւ դերակատարութեամբը լիբանանեան բանակի սուինաւորներու թէ հրացանակիրներու, ինչպէս նաեւ՝ ատոռի Բրգիշոներու, որոնց օծումով կաթողիկոսանալու դիտի զիջանէր հայ կղերը այդ օրերուն...:

– Պիտի հաստատէին, թէ տեղ մը սխալ բան մը կայ Մայր Աթոռի եւ Տանն Կիլիկիոյ իրենց «բարոյ» կոչած յարաբերութիւններուն մէջ, որոնք տարիներէ ի վեր կը շարունակուին առանց դպղաւորումի: Եւ դեռ հարց դիտի տային, թէ Մայր Եկեղեցւոյ եւ Մայր Հայրենիքի ամէն ինչէ գերիվեր շահերը արդեօք շահերը դրէ՞ք չէ՞ ըլլան նաեւ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որ զարմանալի դանդաղկոտութիւն մը կը ցուցաբերէ Հայց. Եկեղեցւոյ միասնութեան վերականգնումի գծով, մինչ անդին ազգային միասնութեան /հանդէպ իր նախանձախնդրութիւնը կը դրսեւորէ իր մասնակցութիւնը բերելով «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կազմակերպումին...:

– Պիտի հաստատէին, թէ աննախընթաց ու նաեւ արտառոց բնոյթ մը ունէր «Հայրական Խօսք»ը՝ երեւան գալով Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին համատեղ ստորագրութիւններով: Աննախընթաց՝ անոր համար որ Հայաստանի տարածքին վրայ, Էջմիածնայ թեմերուն մէջ, Հայց. Եկեղեցւոյ «սպառնացող» վտանգները դիմագրաւելու համար Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին ալ ստորագրութեան կարիքը կը զգացուէր...: Արտառոց, անոր համար որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի հեղինակութիւնը սակարկութեան կը դնէր եւ ուժերու բոլորովին նոր յարաբերութիւն մը կը ստեղծէր Մայր Աթոռի եւ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջեւ նման արարքով մը:

– Եւ տակաւին դիտի հաստատէին, թէ Հայց. Եկեղեցին ու հայ կղերը հիմնական կարիքը ունին բարեկարգումի եւ կատարելագործման: Թիրախներ, որոնց նուաճումը հնարաւոր կը դառնայ իրականութիւնն ընդունելով ու անոր շեշտ նայելով միայն:

Մենք, ռամկավար ազատականներս, դիտի չուզենք անտեղի կերպով եւ մանաւանդ «բարոյ» ընթացքի մէջ գտնուող յարաբերութիւններու վնաս հասցնելով վերարծարծել անցեալը: Բայց դիտի վերարծարծենք զայն ամէն անգամ, որ կողմեր խնդրաբիւրել փորձեն անցեալն ու այդ անցեալին մէջ իր արմատները ունեցող ներկան, եւ կամ ճնշադատութեան թիրախ դարձնեն Մայր Աթոռի հեղինակութեան իրաւէս նախանձախնդիր հոգեւորականներ, աշխարհականներ թէ կազմակերպութիւններ՝ անոնց նախանձախնդրութիւնը ներկայացնելով իբրեւ համերաշխութեան ու միասնութեան արգելակ:

Մենք նախանձախնդիր Հայց. Եկեղեցւոյ մէկութեան ու միասնութեան, բայց նաեւ նախանձախնդիր Մայր Աթոռի գերագահ հեղինակութեան դահոյանման ու ամրապնդման՝ առաջին ողջունողները դիտի ըլլանք Հայց. Եկեղեցւոյ մէկութեան ու միասնութեան վերականգնումին, բայց նաեւ առաջին մերկացնողը դիտի ըլլանք կեղծ միարարութեան ու կեղծ միարարներու, դարտուղարական զիջումներու, եկեղեցին քաղաքական հաշիւներու ծառայեցնողներու, Հայց. Եկեղեցւոյ հերձուածը յաւերժացնել փորձողներու:

Այս խնդիրներուն մէջ աւելի խորանալէ առաջ, կ՚ակնկալենք ու կը սպասենք որ Մայր Աթոռի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը, հերքմնագրի հրապարակման փութաջանութեամբ եւ խոստացուած «ճշգրիտ տուեալներ»ու կողքին, ճշդիւ յստակեցնէ, թէ՝

– Ի՞նչ հանգրուանի հասած են Մայր Աթոռի եւ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բանակցութիւնները՝ ի մասին Հայց. Եկեղեցւոյ միասնութեան վերականգնումին:

– Ե՞րբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնայ դիտի վերադարձուին առօրեայ յափշտակեալ թեմերը:

– Նոր մակարդակ մը նուաճա՞ծ են Հայց. Եկեղեցւոյ կանոնադրութեան մշակման աշխատանքները, որոնցմով բնաւ խանգաւառ չէր Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը դեռ մօտիկ անցեալին, մանաւանդ որ այդ կանոնադրութեամբ կ՚ակնկալուէր յստակեցնել Հայց. Եկեղեցւոյ նուիրապետական կառոյցը:

– Դեռ մինչեւ ե՞րբ Հայց. Եկեղեցին երկու տարբեր դատուիրակութիւններով մասնակցութիւն դիտի բերէ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի նիստերուն, եւլն.:

Մենք կը հաւատանք, որ ուշ կամ կանուխ նուաճուած իրողութիւն մը դիտի ըլլայ Հայց. Եկեղեցւոյ ցանկալի մէկութեան ու միասնութեան վերականգնումը: Մեր այս համոզումին մէջ կը գօտեղնդուինք, երբ մեր շուրջ կը գտնենք մասնաւորապէս երիտասարդ հոգեւորականներ, որոնք նախանձախնդիր են այդ միասնութեան վերահաստատման՝ Ս. Էջմիածնի գերագահ Աթոռին ներքեւ: Բայց կանուխը աւելի լաւ է ուշէն, քանի որ «այս է դպահանջում մեզանից թէ Մայր Եկեղեցու կոչումը, թէ մեր մարտնչող Մայր Հայրենիքի շահը, որ վեր է ամէն բանից»:

■

Գրքեր

Ռաֆայել Հակոբջանյան. «Հայաստանը լի է համաշխարհային մշակույթի դաստիարակության արժանի անուններով»

Հայաստանում գրեթե կես տարի գործող Ստանիսլավսկու եւ Վախթանգովի հիմնադրամն այսօր երկու «Քառասնամյա Վախթանգով» մրցանակ հանձնեց, յուրաքանչյուրը 10 հազար ռուբլի: Առաջին մրցանակը «Թատերական վառ մտածողության համար» հանձնվեց նորաբաց «Մետրո» փակ բատրոնի դերասան Լեւոն Հարությունյանին, «յուրօրինակ ռեժիսուրայի համար» երկրորդ մրցանակի տերը դարձավ Հայաստանի գեղագիտական կենտրոնին առընթեր բատրոնի ռեժիսոր Ռուբեն Թումանյանը:

«Մնարֆ»ի թղթակցի հետ զրուցելիս հիմնադրամի նախագահ Ռաֆայել Հակոբջանյանն ասաց. *«Մենք որոշեցինք մրցանակների կարգախոս ենք ընտրել Վախթանգովի հետեւյալ խոսքերը. «Ես ուզում եմ, որ բատրոնում հանդիսատեսը չկարողանա դարձել իր զգացումները, այլ դրանք տուն տանի եւ դրանցով երկար ապրի» եւ «վոնդել բատրոնը բատրոնից, դերասանին դիտեսից, վոնդել գրիմը, բեմազգեստը»:*

Ռաֆայել Հակոբջանյանն ավելացրեց, որ հիմնադրամի դռները բաց են բոլոր նրանց առջեւ, ում համար բանկ են հայ բատերական արվեստի ավանդույթները, ովքեր հիշում են, որ Հայաստանն առեւտրից բացի լի է այնպիսի անուններով, որոնք կարող են գրվել համաշխարհային մշակույթի դաստիարակության մեջ:

■

Տնտեսություն

Արտահանումը կրճատվում է

Հանրապետության դեպքիմարչության տվյալներով վերջին ինն ամիսների ընթացքում Հայաստանից արտահանվող արտադրանքի ծավալը կազմեց 736,7 միլիոն ռուբլի անցյալ տարվա համադասախան ժամանակահատվածի 130,9 միլիոնի դիմաց: «Մնարֆ»ի թղթակիցը դիմեց էկոնոմիկայի նախարարության արտաքին առեւտրի բաժին՝ այդ թվերը մեկնաբանելու խնդրանքով: Պարզվեց, որ ընթացիկ տարում հանրապետության գների միջին ինդեքսը հավասար է 86-ի եւ առաջին հայացքից այդքան լավատես թվերը խոսում են հակառակի մասին. հանրապետության արտահանման հնարավորությունները կրճատվում են: Հիմնականում արտահանվում են բանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերից պատրաստված արդյունքներ, ինչպես նաեւ ներմուծվող հումքով աշխատող քիմիական արդյունաբերության արտադրանք: Մասնագետները արտահանման կրճատումը կապում են հումքի կտրուկ թանկացման հետ, ինչն անմարդակցելի է դարձնում մեր արտադրանքը համաշխարհային շուկայում:

Ռ. Հովհաննիսյանի ընտանիքը ձմեռը կանցկացնի Հայաստանում առանց հացի կտրոնների

«Մենք մնացել ենք, որպեսզի մեր ժողովրդի հետ կիսենք այս ձմռան դժվարությունները», «Մնարֆ»ի թղթակցին հայտնեց Ռաֆֆի Հովհաննիսյանի մայրը: Իր ամիսներկան հրաժարականից հետո նախկին արտգործնախարարը ոչ թե մեկնեց ԱՄՆ, այլ ԼՂՀ, որի ճանաչմանն ինքը աղաղակում ձգտում էր: Ներկա դրությամբ Ռաֆֆի Հովհաննիսյանի ընտանիքն ապրում է Երեւանում առանց հացի եւ այլ մթերքի կտրոնների: Այն հարցին, թե չի՞ դասրասվում արդյոք որեւ. Հովհաննիսյանը՝ վերադառնալ քաղաքական ասպարեզ, մասնավորապես նախագահի առաջարկած խորհրդականի պաշտոնում աշխատելու, տիկին Հովհաննիսյանը պատասխանեց. «Ռաֆֆին ոչ մի պաշտոնական հրավեր չի ստացել, իսկ քաղաքականության կվերադառնա, երբ ժողովուրդը նրան կանչի»:

Միայն թե նախկին նախարարի մայրը չնշեց, թե ինչպե՞ս ժողովուրդը պետք է կանչի նրա որդուն: ■

Կոչերից

Կռվելու ժամանակը

Երբ պատերազմը դեռեւս միայն սպառնալիք է, խաղաղասիրական ձգտումները բնական են, ողջունելի եւ արժանանում են բացարձակ մեծամասնության հավանությանը: Բայց երբ արդեն քանիերորդ տարին է, որ արյուն է թափվում Արցախում, երբ սահմանամերձ գյուղերն ու քաղաքներն ավերվում եւ օրավուր զոհերն են ավելանում, եւ մանավանդ, երբ հակառակորդը շարունակում է թմբկահարել իր ռազմական հզորության առասպելը, «խաղաղասիրականը» համազոր է կապիտուլյացիայի:

«Հայրենական» մեծ պատերազմի ժամանակ խուճապ տարածող նմանօրինակ դիրքորոշումների տեր անձանց գնդակահարում էին կամ լավագույն դեպքում ախտում: Այսօր, երբ չհայտարարված պատերազմ է, մեզ մոտ պետք է տիրեր չհայտարարված ռազմական դրություն, չհայտարարված ռազմական օրենսդրություն, մինչդեռ տրանսպորտում եւ հասարակական վայրերում, կառավարական որոշ շրջանների բույլտվությամբ, գուցեեւ դրդումով նույնիսկ մամուլում ոչ այս, ոչ այն՝ բանավիճում են պարսվողական ու խուճապային տրամադրական մթնոլորտ ստեղծողները: Սա առնվազն տարօրինակ ժողովրդավարություն է:

Եկեք սրտի վերուծենք իրադրությունը: Հակառակորդի ռազմական գերակշռությունը մեծապես նվազում է, եթե հաշվի առնենք, որ պատերազմի ժամանակ գլխավոր գործոնը զենքի եւ կանգնած մարդն է, մարդու տեսակը: Բոնապարտը չկարողացավ ծնկի բերել իրենից անհամեմատ թույլ Իսպանիային: Աշխարհի մեկ վեցերորդն զբաղեցնող ԽՍՀՄ-ն սիրված եղավ ձեռ քաշել փոքրիկ Ֆինլանդիայից առաջին համաշխարհային պատերազմի սկզբներին, ինչպես եւ հետո: Մի ժամանակ անգլիական, իսկ հետագայում սովետական գերակշիռ զորքերը չկարողացան հաղթել մեզնից շատ ավելի անմիաբան աֆղաններին:

Աֆղանստանի, Իսպանիայի (Իլյա Էրենբուրգը Հայաստանը համեմատում է Կաստալոնիայի հետ) մոտիկ ու նույն զուգահեռականների վրա որպես բնիկ ժողովուրդ ապրելու փաստը հուշում է այն միտքը, որ նմանօրինակ հատկանիշներ գոյություն ունեն միստիկական մակարդակի տոկուն եւ մարտունակ այդ երկու ազգերի եւ հայերի միջեւ:

Վերջապես, մեր շեմպիրատեր ժողովրդին թույլ տվեք հիշեցնել հանճարեղ գրողի իմաստուն խոսքը. «Զգույշ կաց կովից, բայց որ մեջ մտար, գործն այնպես տար, որ զգուշանա ոսոխը քեզնից»: Լինելով չափազանցությունների մեջ ընկնող ժողովուրդ, ազգեսոր համարվելու մտավախությունից մեր համբերատարությունն այնքան երկարձգեցինք, որ մեզ հանիրավի կոչեցին «մազոխիստ» դիտակը: Ուստի միայն հաղթանակների կամ առնվազն ռազմական գործողությունների հավասարակշռությունը, ի հեծուկս հականալի եւ տրամաբանական հոգնածության, գերտրամաբանական եւ աննկուն մեր ցեղի ոգին է, որ կարող է ոսոխին դարձնել զգույշ եւ հարկադրել նստել բանակցությունների սեղանի շուրջը: Այլապես զիջումները չեն, որոնք դիտի հագեցնեն ոսոխին: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Հիտլերին զիջեցին Լեհաստանը, Չեխոսլովակիան; եւ ինչքան զիջեցին, դարձավ ավելի անկուշտ: Այսօր ուզենք, թե չուզենք կռվելը կենսական անհրաժեշտություն է: Այսօր կռվելու ժամանակն է:

ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Քաղաքական

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄՈՒԹ ԱՄՊԵՐ ՄԻՋԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՐԿՆՔՈՒՄ

Ծոցի պատերազմից եւ առավել եւս խորհրդային համակարգի փլուզումից հետո քաղաքական իրադարձությունների ընթացքը Միջին Արեւելքում ու նախկին ԽՍՀՄ հարավում կարելի է բնութագրել իբրեւ հույսի եւ հիասթափության հարափոփոխ բոնկում, ուր նժարը վերջին ժամանակներս հետեւողականորեն թեքվում է հիասթափության կողմը: Այն, ինչ այսօր տեղի է ունենում Միջին Արեւելքում, ոչ այնքան չկանխատեսված քաղաքական բյուրմացության հետեւանք է, որքան հաշվարկված սրատեսիական ընտրություն: Ծոցի պատերազմից հետո խրավիճակն ավելի քան հստակ էր եւ առկա էր երկու ճանապարհների միջեւ ընտրության հնարավորությունը, որը եւ դեռ է կանխորոշեր այսօրվա իրողությունները:

Առաջինը, շրջանում համաշարժակ ռազմաքաղաքական կարգավորման ընթացքի կազմակերպման հնարավորությունն էր, որի շրջանակների մեջ դեռ է ընդգրկվելիք դարերի ընթացքում Միջին Արեւելքում կուտակված եւ իրենց լուծումը պահանջող բազմաբնույթ քաղաքական, ազգային, կրոնական, տնտեսական եւ մշակութային խնդիրները: Նրանց փոխկապակցության չափազանց բարձր աստիճանը բացառում էր առանձին վերցրած որեւէ խնդրի հանգուցալուծումն առանց շրջանի բոլոր երկրների եւ ժողովուրդների մասնակցության, առավել եւս առանց նրանց շահերն ու իրավունքները հաշվի առնելու:

Միջին Արեւելքը մի երկարատեւ եւ ընդգրկուն ընթացքի կարիք ուներ, որ բոլոր կողմերի մասնակցությամբ կքննարկվեին, կմշակվեին եւ կընդունվեին այն քաղաքական, իրավական եւ բարոյական հիմքերը, որոնցից ելնելով էլ լուծում կտրվեր ծառացած հիմնահարցերին: Շրջանն ի վերջո դեռ է ձեւավորվեր իբրեւ ռազմաքաղաքական եւ տնտեսական համակարգված միավոր, ուր բազմակողմանի ինտեգրացիայի, ընդհանուր անվտանգության ապահովման եւ տնտեսական ու մշակութային բնական առաջընթացի նախադրյալների ձեւավորումը, այսինքն շրջանի ընդհանուր շահը ավելի բարձր կլիներ, քան մասնավոր շահը կամ խնդիրը: Արդյունքում շրջանը կարող էր ձեւավորվել իբրեւ միասնական քաղաքակրթական մի միավոր, որը արեւմտյան համակարգի հետ հավասար իրավունքներով կհավասարակշռեր եւ կվերահսկեր քաղաքական զարգացումներն աշխարհում:

Ինքնին հասկանալի էր, որ միջինարեւելյան ընդհանրությունը չէր կարող ձեւավորվել Արեւմուտքում մշակված եւ նրա իրողություններին համապատասխանող իրավական ու քաղաքական նորմերի հիմքի վրա: Միջին Արեւելքի պատմամշակութային եւ քաղաքակրթական արմատական տարբերությունը Արեւմուտքից դահանջում էր նոր մոտեցումներ եւ միավորող արժեքների որակապես նոր, այդ շրջանի ժողովուրդների համար ընկալելի եւ ընդունելի համակարգ: Բայց սրա կողքին, ինչ խոսք, կար երկրորդ ճանապարհը, որի ընտրությունն ու դրանից բխած հետեւանքներն այսօր ակնհայտ են: Շրջանում խաղաղ կարգավորման համաշարժակ ընթացքի փոխարեն նախընտրվեց Միջին Արեւելքն ու նրա հիմնահարցերը մասնատելու, առանձին երկրների եւ ժողովուրդների շահերը ոտնահարելու կամ շահարկելու միջոցով մեկուսացված խաղաղություն ձեռք բերելու ճանապարհը: Արհամարհվեց շրջանի պատմավանդակական ինքնատիպությունը, եւ արեւմտյան սանդարտները ռազմաքաղաքական ու տնտեսական ճնշման միջոցով այն բնակեցնող ժողովուրդների կամքին փաթաթելու հերթական փորձն արվեց: Միավորված եւ դրանով իսկ ուժեղ ու կայուն Միջին Արեւելքի փոխարեն նախապատվությունը տրվեց թույլ, պառակտված եւ հակասություններից ծվատվող շրջանին:

Հակահիտլերյան դաշնակցությունը մասնակցած արաբական երկրների կողմից ձեւավորված «Դամասկոսյան դաշինքը» լայն հեռանկար էր բացում տասնամյակների ընթացքում քաղաքական շահերով միմյանցից տարանջատված արաբական երկրների միջեւ փոխըմբռնման աճի եւ ընդգրկուն համագործակցության համար: Եգիպտոսը բնական ճանապարհով վերականգնում էր իր առաջնորդող դերը արաբական աշխարհում, սերտ համագործակցության մեջ լինելով Սիրիայի հետ: Ծոցի երկրները, երկարատեւ անհոգությունից հետո, վերջապես հնարավորություն էին ստացել ըստ արժանվույն գնահատելու Եգիպտոսի, Սիրիայի եւ մյուս արաբական երկրների դաշնակցության նշանակությունն իրենց անվտանգության համար: Դամասկոսի եւ Թեհրանի միջեւ ավանդական բարեկամությունն իրական ճանապարհ էր բացում իսլամական հեղափոխությունից եւ առաջ, եւ հետո Իրանի ու արաբական երկրների միջեւ հարաբերություններում սուր լարվածությունը մեղմացնելու եւ հարաբերությունները կանոնավորելու համար: Կողմնակի ուժերի կամքից անկախ տեղի էր ունենում Միջին Արեւելքի երկրների դժվարին, բայց հուսադրող մերձեցման ընթացքը, որը անհրաժեշտ աջակցության եւ բարի կամքի առկայության դեպքում կարող էր դառնալ համաշարժակ խաղաղ կարգավորման հիմք:

Ինչո՞ւ դա տեղի չունեցավ եւ ինչո՞ւ Ծոցի պատերազմից երկու տարի հետո Միջին Արեւելքում կրկին իրենց ողջ սրությամբ կանգնել են արաբա-իրանական եւ միջարաբական հակասությունները, իսկ արաբա-իսրայելյան բանակցությունները կարգավորման ցանկությունների դրսեւորումներից այն կողմ չեն անցնում: Նախ, որովհետեւ շրջանի երկրներն անհրաժեշտ քայլեր չարեցին բարենպաստ պայմանները Միջին Արեւելքում համաշարժակ կարգավորման գործընթացին ծառայեցնելու ուղղությամբ: Արաբական աշխարհը ինքնամեկուսացավ արաբա-իսրայելական հիմնահարցի կարգավորման կաղապարի մեջ, անուշադրության մատնելով ԽՍՀՄ փլուզումից հետո շրջանում նոր իրողությունները. Միջին Արեւելքի համալրումը նորաստեղծ պետություններով եւ նրանցով պայմանավորված ռազմաքաղաքական եւ տնտեսական գործոնների անմիջական ազդեցությունը բուն արաբա-իսրայելական հիմնահարցի վրա:

Սեփական ազգային խնդիրը շրջանի հիմնահարցերի ընդհանուր համատեքստից դուրս, սեղարաս ձեւով լուծելու իրենց ձգտման մեջ արաբական երկրներն իրենց դուրս դրեցին ընդհանուր աշխարհաքաղաքական նոր իրողությունների ձեւավորման ընթացքից, անհրաժեշտ ասպիճանի հարաբերությունների մեջ չմտան նորաստեղծ պետությունների հետ եւ տանուլ տվեցին, քաղաքական ընդհանուր հաշվեկշռում մնալով նույն ասպիճանին, ինչ որ կար մինչեւ ԽՍՀՄ փլուզումը եւ, ավելին, անգամ թուլացած, եթե հաշվի առնենք, որ Ծոցի պատերազմում եւ Իրաքի դեմ կիրառված պատժամիջոցներում տուժեցին նախ եւ առաջ արաբական երկրները: Քուվեյթը, Իրաքը եւ Հորդանանը: «Դամասկոսյան դաշինքի» շրջանակներում ընթացող տեղաշարժերն ու Իրանի հետ մերձեցման հնարավորություններն անշուշտ ամրացնում էին մերձակասային արաբական երկրների դիրքերը, սակայն դա մեկուսացված տեղաշարժ էր եւ աշխարհաքաղաքական ընդհանուր համատեքստում արաբական երկրների դիրքերը ոչ միայն չուժեղացան, այլեւ խիստ թուլացան:

Իսրայելն, ընդհակառակը, օգտագործելով իր ազդեցությունը Արեւմուտքում եւ ավանդական սերտ կապերը Թուրքիայի հետ եւ օգտվելով նորանկախ պետությունների քաղաքական աղագայի նկատմամբ արաբական աշխարհի անտարբերությունից, ամենաակտիվ ձեւով ներթափանցեց նախկին ԽՍՀՄ հարավը, օգնեց Թուրքիային անհրաժեշտ քաղաքական վերահսկողություն հաստատել այդ տարածքների վրա եւ բացարձակորեն արեւմտամետ բյուրքական կափարիչի ձեւավորումը արաբա-մահմեդական աշխարհի վրա լիակատար իրողություն դարձավ: Սա խիստ ուժեղացրեց Իսրայելի դիրքերը ոչ միայն շրջանում, ուր նա առանց այդ էլ ուժեղ էր, այլեւ աշխարհաքաղաքական ընդհանուր համատեքստում:

Դրանից հետո սպասել, որ Իսրայելը շուտափելի զիջումների կգնա արաբա-իսրայելյան հիմնահարցում, իհարկե, իրատեսական չէ: Ընդհակառակը, ժամանակն աշխատում է նրա օգտին եւ ԽՍՀՄ փլատակների վրա առաջացած երկրներում իր դիրքերն ու ազդեցությունը ամրապնդելուն զուգահեռ նա կարծրացնելու է իր դիրքորոշումը, կարգավորման ընթացքը տանելով ոչ թե փոխզիջման, այլ միակողմանի, արաբական կողմի զիջումների ուղիով:

Արաբա-մահմեդական աշխարհի քաղաքական դիրքերը սասանվեցին նաեւ մի շարք այլ պատճառներով: Այսպես, Ծոցի երկրների համար, որքան էլ որ պաղեստինյան խնդրի կարգավորումը կարեւոր էր, առաջնայինն, այնուամենայնիվ, մնում էր սեփական անվտանգության հիմնահարցը, եւ շրջանային համաշարժակ կարգավորման ընթացքի բացակայության պայմաններում նրանք բնականաբար նախընտրեցին արեւմտյան զինուժի մշտական առկայությունն իրենց սարածքներում, որը, հասկանալի է, եւս չի ծառայում արաբական դիրքերի ամրությանը Իսրայելի հետ բանակցություններում:

Արաբական աշխարհի առաջնորդող երկրի դերին հավակնող եւ այն փաստորեն ստանձնած Եգիպտոսը նվազագույն քաղաքական ինքնուրույնություն ունի, քանզի սեփական ազգային անվտանգության համար նա կարիք ունի ամերիկյան զինուժի եւ արաբական աջակցության: Սիրիայի դիրքերը, թեեւ ամրապնդվեցին նախկին ԽՍՀՄ հարավը, օգնեց Թուրքիային անհրաժեշտ քաղաքական վերահսկողություն հաստատել այդ տարածքների վրա եւ բացարձակորեն արեւմտամետ բյուրքական կափարիչի ձեւավորումը արաբա-մահմեդական աշխարհի վրա լիակատար իրողություն դարձավ: Սա խիստ ուժեղացրեց Իսրայելի դիրքերը ոչ միայն շրջանում, ուր նա առանց այդ էլ ուժեղ էր, այլեւ աշխարհաքաղաքական ընդհանուր համատեքստում:

Դրանից հետո սպասել, որ Իսրայելը շուտափելի զիջումների կգնա արաբա-իսրայելյան հիմնահարցում, իհարկե, իրատեսական չէ: Ընդհակառակը, ժամանակն աշխատում է նրա օգտին եւ ԽՍՀՄ փլատակների վրա առաջացած երկրներում իր դիրքերն ու ազդեցությունը ամրապնդելուն զուգահեռ նա կարծրացնելու է իր դիրքորոշումը, կարգավորման ընթացքը տանելով ոչ թե փոխզիջման, այլ միակողմանի, արաբական կողմի զիջումների ուղիով:

Արաբա-մահմեդական աշխարհի քաղաքական դիրքերը սասանվեցին նաեւ մի շարք այլ պատճառներով: Այսպես, Ծոցի երկրների համար, որքան էլ որ պաղեստինյան խնդրի կարգավորումը կարեւոր էր, առաջնայինն, այնուամենայնիվ, մնում էր սեփական անվտանգության հիմնահարցը, եւ շրջանային համաշարժակ կարգավորման ընթացքի բացակայության պայմաններում նրանք բնականաբար նախընտրեցին արեւմտյան զինուժի մշտական առկայությունն իրենց սարածքներում, որը, հասկանալի է, եւս չի ծառայում արաբական դիրքերի ամրությանը Իսրայելի հետ բանակցություններում:

Արաբական աշխարհի առաջնորդող երկրի դերին հավակնող եւ այն փաստորեն ստանձնած Եգիպտոսը նվազագույն քաղաքական ինքնուրույնություն ունի, քանզի սեփական ազգային անվտանգության համար նա կարիք ունի ամերիկյան զինուժի եւ արաբական աջակցության: Սիրիայի դիրքերը, թեեւ ամրապնդվեցին նախկին ԽՍՀՄ հարավային խնդիրը եւ արաբա-մահմեդական աշխարհը խառնվեց իրար. Բահրեյնը ցուցաբերեց իր իրանամետ դիրքորոշումը, Կատարն ու Սաուդյան Արաբիան վերհիշեցին իրենց չլուծված տարածքային խնդիրը, Եմենը հառեց հայացքը սաուդյան տարածքների վրա:

Այս «հանկարծահաս» խառնաշփոթի վերջին ակորդը եգիպտա-իրանական հարաբերությունների խիստ վատթարացումն էր: Իսկ չէ որ այս ամենն ուղղակիորեն ազդում է արաբա-իսրայելական բանակցությունների վրա, ուր բոլոր արաբական երկրներն ու Իրանը, բոլոր տարակարծություններով հանդերձ, կարծես թե ընդհանուր շահ ու նպատակ ունեն՝ արաբական տարածքների ազատագրումը: Այսպիսով, վերադառնում ենք նույն զրոյական կետին: Չի կարող լինել արաբա-իսրայելական խաղաղ կարգավորում, եթե չկա Միջին Արեւելքում համաշարժակ կարգավորման ընթացք: Այլ տարբերակով, թույլ ու անկազմակերպ արաբա-մահմեդական աշխարհը կգնա անսկզբունքային զիջումների, որը երբեմ կայուն խաղաղության երաշխիք չի կարող լինել:

Այսօր միակ երկիրը, որն առավելագույն հաստատուն դիրքերի վրա է կանգնած, Սիրիան է: Դամասկոսն է, որ առայժմ կարողանում է հավասարակշռված հարաբերություններ պահպանել ինչպես Իրանի, այնպես էլ արաբական երկրների հետ: Բայց Միջին Արեւելքում տեղի ունեցող տիաճ տեղաշարժերի ենթատեքստերից մեկն էլ Սիրիայի վրա ազդելու եւ նրա կայուն դիրքորոշումը սասանելու նպատակն է: Այն բանից հետո, երբ իրանա-սիրիական համագործակցությամբ հնարավոր եղավ իրականացնել Լիբանանում պահվող արեւմտյան պատանդների ազատագրումը, երբ Իրանը շուտափելի քայլեր էր անում Արեւմուտքի հետ իր հարաբերությունները նորմալացնելու ուղղությամբ, ԱՄՆ-ը մեկ հարվածով ի չիք դարձրեց բոլոր ձեռքբերումները, իր ամենամյա զեկուցագրում կրկին Իրանը դասելով ահաբեկչությանն աջակցող երկրների շարքում: Ավելի ուշ, Իսրայելի հետ բանակցություններում Սիրիայի դիրքորոշման վրա ազդելու նպատակով նույնն սկսեցին փաթաթել նաեւ Սիրիային: Այսօրվա գեղարվեստությունը արաբա-իրանական հարաբերություններում Սիրիայի վրա ազդելու եւս մեկ փորձ է: Մի կողմից, եթե Սիրիան չի պաշտպանում արաբական շահերի պաշտպանության եգիպտական տարբերակը եւ պահպանում է իր բարեկամական հարաբերությունները Իրանի հետ, արդա զիջում է իր դիրքերն արաբական աշխարհում, իսկ եթե օտարվում է Իրանից, արդա թուլացնում է իր քաղաքական դիրքերը շրջանում: Թեեւ նախագահ Ասադը հնուս դիվանագետ է եւ այս իրավիճակից եւս դեռ է որ դուրս գա, սակայն բացասական հետեւանքներն անխուսափելի են:

Նախկին ԽՍՀՄ տարածքներում կենսականորեն անհրաժեշտ քաղաքական ազդեցության ձեռք բերման հարցի նկատմամբ արաբական աշխարհի անհոգ անտարբերությունը կարող էր փոխհատուցվել Իրանի քաղաքականությամբ եւ արաբա-մահմեդական աշխարհն այսպես թույլ չէր լինի, սակայն Իրանն իր ազգային եւ ընդհանուր շրջանային աշխարհաքաղաքական շահերը սնորդասում է կրոնական-գաղափարախոսական ստերեոտիպներին: Դա, ինչ խոսք, չի նպաստում նորաստեղծ պետությունների արդյունավետ հարաբերությունների հաստատմանը Միջին Արեւելքի երկրների հետ եւ Արեւմուտք տանող բարեկամական միջանցքը շարունակում է մնալ իբրեւ գերադասելի քաղաքական ընտրություն:

Եւ վերջապես Իրանը միայնակ չի կարող ներկայացնել եւ պաշտպանել ողջ շրջանի շահերը այս մեծ եւ բարդ տարածքներում, մրցակցելով Արեւմուտքի բազմակողմանի աջակցությունը վայելող բարեկամական տանդեմի հետ: Ընդհանրապես, եթե արաբա-մահմեդական աշխարհն ուզում է չեզոքացնել «բյուրքական կափարիչի» սպառնալիքը, նա պետք է հաշվի առնի նորանկախ պետությունների բնական ձգտումը դեպի Արեւմուտք: Դա նախ եւ առաջ վերաբերում է Սիրիային եւ Իրանին, որոնց ազգային անվտանգության առագան անմիջականորեն կախված է շրջանում բարեկամական գործոնի ազդեցության ասպիճանից: Պաշտպանելով իրենց ժողովուրդների ինքնիշխանությունն ու ինքնատիպության պահպանման իրավունքը, շրջանի ընդհանուր շահերը, նրանք միաժամանակ պետք է աղյունավետ միջոցներ ձեռնարկեն Արեւմուտքի հետ հարաբերությունների կարգավորման համար, որը կնպաստեն նորանկախ պետությունների վարչակարգերի Արեւելքի հետ մերձեցման ընթացքում Արեւմուտքի հովանավորությունից զրկվելու կամ նրա կողմից դաժվելու բնական վախը:

Օբյեկտիվ իրականությունն այն դիսին է, որ առանց Արեւմուտքի ակտիվ մասնակցության հնարավոր չէ հավասարակշռել ուժերի հարաբերակցությունը Միջին Արեւելքում եւ վերադառնալ համաշարժակ կարգավորման անհրաժեշտության գաղափարին, առավել եւս իրականացնել այն: Դա, իհարկե, չի կարող լինել արեւմտյան թելադրանքին անձնատուր լինելու ճանապարհով, այլ միայն աղագացնելով Արեւմուտքին, որ նա դարտավոր է հաշվի նստել եւ հարգել շրջանի երկրների ու ժողովուրդների շահերն ու իրավունքները եւ որ կայունությունն ու խաղաղությունը Միջին Արեւելքում ոչ միայն շրջանի ժողովուրդների ազատ ու աղյունավետ զարգացման հրամայական նախադայմանն է, այլեւ ողջ աշխարհի: Իսկ դրա համար արաբա-մահմեդական աշխարհը դեռ է դուրս գա իր շրջանային նեղ կաղապարից եւ բավարար մասնակցություն ցուցաբերի նորաստեղծ պետականությունների քաղաքական կողմնորոշումների ձեւավորման գործում: Որքան էլ որ առաջին հայացքից տարօրինակ կինչի, բայց միջինարեւելյան հիմնահարցերի, այդ թվում նաեւ արաբա-իսրայելյան խնդրի արդարացի հանգուցալուծման եւ ընդհանրապես արաբա-մահմեդական աշխարհը կազմող ժողովուրդների ազգային անվտանգության առագան այսօր որոշվում է նախկին ԽՍՀՄ տարածքներում քաղաքական մրցակցության արդյունքներով: Եթե այդ երկրները չհավասարակշռեն իրենց քաղաքական ուղղվածությունն Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ, այլ միայն բարեկամական գրկախառնությամբ հակվեն դեպի Արեւմուտք, արդա հետեւանքներն իրենց վրա կզգան եւ Իրանը, եւ արաբական երկրները: Միջին Արեւելքում եւ նրան հարող նորանկախ երկրներում զարգացում ապրող վտանգավոր իրողություններ ոչ միայն շրջանի ժողովուրդների միջեւ եղբայրասպան պատերազմների եւ նրանց աղյունավետ զարգացումը խափանելու մեջ շահագրգռված օտար ուժերի խարդավանքի արդյունքն են, այլեւ շրջանի ժողովուրդների անճարելի թուլության: Թուլություն, որն անդամման դեռ է հաղթահարվի: ■

digitised by A.R.A.R.@

Քանակեմ

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ. ԿԵՂԾ ԵՎ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

Անհատներն են կերտում պատմությունը, ոչ թե ժողովուրդները

Քաղաքական պատրաստվածությունը, ներքին ռեֆորմացիան յուրաքանչյուր հասարակության զարգացման անհրաժեշտ պայմանն են: Որքան էլ պատմությունը կրկնվի, նրա ցանկացած շրջադարձում հին արժեքները չեն կարող ծառայել որպես հենարան: Անհրաժեշտ է դրանց վերանայում եւ վերարժեքավորում: Հայտնի է նաեւ, որ հասարակության գաղափարական «հին» վերնախավի համար այդ ընթացքը ցավոտ է, հաճախ անընդունելի, եւ օգտագործելով իր դիրքը, նա ամեն կերպ խոչընդոտում է դրան: Այս դեպքում կարեւորվում է «հակառակ կողմի» կազմակերպվածությունն ու պատրաստվածությունը, իսկ եթե դա էլ է բացակայում, հասարակությունը թեքվում է դեպի իր խնդիրների անլուծելիության մտայնությունը:

Մի հայացք նետելով հայ ժողովրդի պատմությանը, ակնառու է դառնում, որ «հնի» ու «նորի» բախումը գրեթե միշտ ընդունել է ծայրահեղ ձեւեր, եւ այս համատեքստում հայկական միտքը հետաքրքիր տարուբերումներ է արձանագրում: 4-րդ դարում քրիստոնեությունը վճռական հաղթանակ տարավ այնպիսի հետեւողականությամբ, որ հայ ժողովրդի նախաքրիստոնեական քաղաքակրթությունից գրեթե ոչինչ չմնաց, նույնիսկ ժողովրդի կենցաղում (եթե չհաշվենք մի քանի ծեսերն ու ավանդույթները): Սա աբխարհում նմանը չունեցող երեւույթ էր, ըստ էության՝ ցավալի իրողություն, որը հետագայում կանխորոշեց շատ ու շատ իրադարձություններ: Տնտեսական եւ մշակութային ավերներից զատ նոր գաղափարախոսությունը հեղաշրջեց ժողովրդի գիտակցությունը, մասնավորապես արմատավորելով հանուն հավատի նահատակության հանուն ոգեսակեսության նահատակության փոխարեն: Սրա գագաթնակետը դարձավ Ավարայրի ճակատամարտը, որը գովերգվելով նաեւ եկեղեցու եւ ժամանակի եկեղեցական պատմիչների եւ հետագայի հայ գործիչների կողմից, կարծես կոչված էր ընդմիշտ արմատավորել հետեւյալ իրողությունը. պետության կերտման ցանկացած փորձ պետք է քարոզվեր որպես դավաճանություն, որպէս ժողովրդի ճակատագիրը մեկ ճակատամարտով լուծելը՝ հայրենասիրություն: Իսկ թե ինչ կատարվեց Ավարայրից հետո՝ բոլորին է հայտնի: Բոլորին է հայտնի նաեւ, թե ինչով ավարտվեցին ուժեղ պետություն կերտելու Պարսից թագավորի ջանքերը: Համենայնդեպս, հայկական միտքը ժամանակին նրան ներկայացրեց անբարոյականի ամենասեւ գույներով:

Հայ մտավորական վերնախավի պատմությունը հետաքրքիր օրինաչափություններ է արձանագրում. լինելով խիստ բեւեռացված՝ պալատական եւ հակապալատական, նա միշտ ճգնել է պետական մտածողությունը, այն ներկայացնելով որպես հերետիկոսություն: Ժամանակին ոչնչացվել կամ մեկուսացվել են բոլոր այդ տեսակ մարդիկ՝ մինչեւ մեր օրերը:

Խորհրդային տարիներին մտավորականությունը խստագույնս «գտվեց», հետագա տարիներին չնչին բացառություններով վերածվելով երկու խմբի. առաջինը «տիրում» էր իր բնագավառին, երկրորդը սուրճ ու գարեջուր էր խմում դրսում՝ հիմնականում դժգոհ ու մերժված: Առաջին խումբը տիրում էր լիովին. բնագավառը՝ ինստիտուտ, ֆակուլտետ, ամբիոն, բաժին, վեր էր ածվել ֆեոդալական տիրույթի, ստեղծվել էր պաշտոնական տեսակետ եւ իրերի դրության քարացած ընկալում, որից դուրս ամեն ինչ սխալ էր ու վնասակար: Հատկապես հումանիտար բնագավառում հայ հասարակական-քաղաքական մտքի պատմությունից մեկ-երկու հոգի առանձնացվեցին, եւ նրանց ասույթներն ու դիրքորոշումները դարձան միակ ճիշտն ու օրինակելին: Եւ ստեղծվեց ծիծաղելի վիճակ. որեւէ հարցի շուրջ բանավեճում կողմերը մեջբերումներ էին անում մտքի այդ հսկաներից, որոնք հաճախ հակասում էին իրար, իսկ հասարակ ընթերցողը չէր կարողանում կողմնորոշվել: Նաեւ այն տպավորությունն էր ստեղծվում, թե տիպոսավոր մտավորականները սահմանափակ տեսահորիզոն ունեն եւ այդ մեկ-երկու հեղինակներից զատ այլ բան չեն կարողացել եւ ինքնուրույն մտածելը կամ անհնար է, կամ պարզապես ոչ նպատակահարմար:

Մամուլի էջերում հայտնված բանավեճերն ու առանձին ընդարձակ հոդվածները հասարակական-քաղաքական նկատառումներով պարզորոշ ցուցադրում են հայկական՝ ներկա մտքի սնանկությունը: Այդ հոդվածներում, պարզունակ ընդհանրացումներից բացի, գերակշռում է հայհոյանքը: Նոր, բարձր ասելիք չունենալով, տիպոսակիր եւ անտիպոս մտավորականները բավարարվում են մեզնից հարյուր տարի առաջ աղրածների ասույթներով, չտեսնելով կամ չտեսնելու տալով նոր իրողությունները, որոնց համատեքստում այդ ասույթները տեղ-տեղ անբովանդակ ու պարզունակ են: Իսկ թե ինչ մակարդակի վրա է հայ մտավորականության մի պատկառելի մասի քաղաքական պատրաստվածությունը, հատկապես ցայտուն երեւաց Բլեյանի հոդվածից հետո: Հասկանալով Բլեյանի տեսակետների «վնասակարությունը», ոչ ոք չկարողացավ զերծ մնալ անձնական վիրավորանքների արատավոր գծից եւ հիմնավորել, համոզել հակառակը: Ցավալի իրողություն. մի կողմից գրագետ շարադրված, հիմնավորված «վնասակար» տեսակետ, մյուս կողմից՝ հարյուրավոր հայհոյանքներ (թեկուզ եւ դարձյալ գրագետ շարադրված): Ո՞ւմ կհետեւեն մարդիկ...

Այս վիճակով մտավորականությունը չի կարող եւ չպետք է առաջնորդի ժողովրդին: Պետք են նոր մարդիկ, նոր արժեքների կրողներ: Այս ժողովրդի միջից մեկընդմիշտ պետք է արմատախիլ անել զոհի բարդույթը, նրան առաջնորդել մեծ գործերի: Պատմությունը մեզ համար ոչ թե տուն պետք է դառնա, այլ բոիչֆահրաղարակ: Ժողովուրդը չպետք է վախենա մեծ գործերից եւ պետք է ձգտի ծավալվելու եւ հայրենիք կերտելու: Ժողովուրդը գաղափարապես պետք է հասնի այն մակարդակին, որ սեփական գոյատեւման ճանապարհներն իմը բացի, ոչ թե կառչած մնա մեկ-երկու թույլ երակից: Միայն այդ դեպքում մենք կդառնանք լիաթոք ապրող ու արարող ազգ: Այսօրվա բոլոր ուժեղ ազգերն այդ ճանապարհով են տիրացել իրենց այսօրին: Քանզի նրանց գաղափարական վերնաշենքը մեկընդմիշտ թոթափել էր այն բոլոր արժեքները, որոնք առաջընթաց չէին ապահովում:

Մենք առայժմ չունենք այդ վերնախավը: Դրա փոխարեն ունենք անկենսունակ ու ծվծվան-հայհոյող մտավորականություն, որ այս չորս տարում բաց նամակների մակարդակից չաճեց, չհիմնավորեց հայ ժողովրդի պահանջատիրությունն ու չպատրաստեց նրան մեծ գործերի: Ավելին, լինելով այդպիսին, նա թույլ տվեց իր հետ վարվել ինչպես ուզում են, քանզի հացով գոյությունը գալիս էր դեռեւս խորհրդային-ֆեոդալական աղբեւրներից եւ սերտաճել էր մտավորականի բուն կոչմանը: Հայրենասիրությունը չպետք է լինի այդ մասին բարձրաձայն գոռալն ու ամբոխներին գրգռելը, որոնց մարտունակությունը փոխարինվում է «խառը կոիվներով»: Անհրաժեշտ է գաղափարախոսություն, որին կհասնեն այն ուժերը, որոնք պետականությունը վեր կդասեն բարոյական համարվող հին չափանիշներից, իրական հաղթանակները՝ հանուն անգոյության բարոյական հաղթանակներից, ազգի գոյատեւումն ու հարատեւումը՝ համաբխարհային չափանիշներից, որոնք չեն ունենա բընամուն հայհոյելու եւ բարեկամին ատրամարտելու բարդույթը: Նրանք ժողովրդին կհասկացնեն, որ արդեն հազար տարի է կորցնում ենք՝ փոխարենը ոչինչ չստանալով, եւ եկել է ժամանակը վերանայելու հազար տարվա մեր «դիրքորոշումը»: Սակայն կհասկացնեն ոչ ավանդական ձեւերով՝ ճառեր ասելով ու բողոքի բաց նամակներ գրելով, այլ առաջնորդելով հասարակություն-ժողովրդի նոր արժեքներով առաջնորդվելն ու բնական, բարդույթներից զերծ զարգացումը:

Կրկնում ենք, ներկա «գաղափարական» վերնաշենքն իրավունք չունի առաջնորդելու ժողովրդին ու հաշուի ազգության կամքին պետք է բռնի առաջարկը եւ հանդես չգա հրաշալարակումներով, քանզի դրանք բերում են հասարակության ուշադրությունը կարեւորագույն հիմնախնդիրներից եւ արգելում հասարակական մտքի առաջընթացը: Այդ ազնվությունը նրանք պետք է ունենան: Չնայած շատ դժվար կլինի, սակայն պարտավոր են:

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՖԱՐՅԱՆ

Կարծիք

Մի տարեք մեզ նոր փորձության

Որպես քաղաքացի, այսօրվա կյանքով ապրող հայրենիքի զավակ, որ վաղը ժառանգելու է պետություն, ժողովուրդ, մտածողություն, հող, հայրենիք, չեմ կարող չանդրադառնալ, չարձագանքել այսօր շուրջս ծավալվող շարժումներին, պետական մտածողության պակասին, անդեռուտ ու անարդյունք կուսակցական անհանդուրժողականությանը, անմիտ ու անհասկանալի պատերազմին: Վաղը ժառանգելու եմ երկիր ու «ավերակա՞ց բազավորեմ»: Ես ու իմ սերունդն ենք այս երկրի իրական տերը:

Մտածենք, ի՞նչ են անում մեր հայրերը: Սարո՞ւմ, թե քանդում են: Վաղը ինչ ենք սանալու՝ պետությո՞ւն. երկի՞ր, թե՞ ավերակներ... Չէ՞ որ խոսացել էիք այլ ճանապարհ, ինչո՞ւ այդպես չարեցիք: Ի՞նչը խանգարեց:

Կարծում եմ չկա ոչ մի հայաստանցի, ոչ մի հայ, որ չի երազում տեսնել «միացյալ Հայաստանը»: Սա ամեն հայի երազն է, ամեն հայի իդեալը, որ ծնվում է յուրաքանչյուրիս հետ, աղրում մանկությունից մինչեւ խոր ծերություն: Մտածելով այս գաղափարների մասին, երազելով ցանկալի հողահավաքը, արտերիս մեջ վառ պահելով 1915-ի ցավը, արտի մի անկյունում եռագույնը՝ աղրեցինք 70 տարի: 1988-ը փոխեց ամեն ինչ: Դուրս եկավ բանտարկված եռագույնը, կառուցվեց նոր, անկախ Հայաստանը:

Թվում էր, թե երազը դառնում էր իրականություն, երբ աննկատ, ծանր քայլերով մեր դռոը թակեց պատերազմը եւ ներս մտավ:

Մեր հերթական սխալներից մեկը, որ չգիտես բախիցդ է, թե խելքիցդ: Կարծում եմ, որ մասնավորապես վերջինը: Առաջին պահին տրվեցինք ոգեւորությանը եւ չփորձեցինք լսել առողջ բանականության ձայնին: Աղա մոռացանք մեր քաղաքական մտքի դեռեւս չգերազանցված կոչը՝ «Մենակ ենք»: Այսօր նորից խաղում ենք կրակի ու յուղի հետ: Կրակի վրա յուղ լցնում, հրի լեզվակները բարձրացնում վեր եւ անխելք երեխայի պես հրճվում: Ու սա համարում ենք պետական ծրագիր: Սրանով ենք առաջնորդվում եւ սրանով փորձում տանել մեր ետեւից մի ամբողջ ժողովուրդ, մի ամբողջ պետություն: Իսկ դիվանագիտությունը արհամարհում ենք, կարծես մեր կենաց-մահու բընամին է:

Առանց հաշվեհարության եւ առանց հաշիվ տալու նետվել ենք պատերազմի բոհ ու բոհի մեջ: Եւ ո՞ւմ հետ, ինչո՞ւ:

Ճիշտ հասկանանք: Հարցը չի դրված ուզում ենք, թե ոչ: Այլ դրված ուզում ենք, թե՞ կա՞ կարո՞ղ ենք, թե՞ ոչ, եւ ընդհանրապես ի՞նչ ենք կարող:

Կարծում եմ, կարիք չկա թվելու հնարավորությունների եւ առավելությունների ցանկը, որ ունի բընամին: Կարեւորը չբերագնահատելն է: Մեր մեջ նստած է այնպիսի կարծիք, թե «մեզնից է կախված Եվրոպայի հզորությունը, թե Մանազկերտի ճակատամարտն էր աշխարհի բախտը որոշողը» եւ այլն: Եկեք դեն նետենք սա ու հայրենիքը չդնենք անդաստիվ վիճակում: Այն կլինեն: Բարեկեցիկ կյանքն է ուժեղ երկիր ու հայրենիք ստեղծում: Բարեկեցիկ կյանքով է հայրենիքը բանկ դառնում: Թշվառ ու անտեր հայրենիքը սիրելի է միայն հեռվից: Եկեք մի անգամ եւս հաշիվ տանք մեզ, մի կողմ դնելով մեր երազները, ռեալ դիտելով իրողությունը: Ո՞ւմ հետ, ինչպե՞ս, կարո՞ղ ենք, ի՞նչ ենք կարող:

Իսկ այսօր մենք ի՞նչ ունենք: Ուղիղ նայենք: Առանց սեւ ակնոցների, արեւի լույսի տակ: Իսկ վաղը ինչ կունենանք: Գորշ իրողություն ընդամենը:

Հաց չկա: Արդեն այսօր հացը բարոյալքում է ժողովրդին: Գաղափարը մեռնում է սամոխի կրվում: Սոցիալ-տնտեսական ճգնաժամը մոռացնել է տալու վերածնված վեհ գաղափարները: Բամվի «Զերկալո» բերքն արտասոովել է «Մոնդ» հանդեսում կատարված սոցիոլոգիական հարցումը: Հայաստանցիների 70 տոկոսը դեմ են հարցի պատերազմական լուծմանը:

Սա դիվանագիտական համոզվածություն չէ: Սա սամոխի ձայնն է: Ի՞նչ պատերազմի մասին է խոսքը, եթե դառնում ենք հեղափոխական ազգ, կարմիր դրոշեռով, հացի ու դրամի պահանջով: Կունենանք «սամոխ-ուղեղով» բանակ, որ կուրանալու է, դառնալու է զենք նրանց ձեռքին, ով չի ճանաչում ոչ մի արդություն: Հիշենք մեր ապրած 70 տարիները, երբ սամոխը դարձավ ժողովրդական մտածողություն: Հացը գերադասվեց ազատությունից: Վերջը դեկտեմբերի 2-ն էր: Մի ժառանգեք մեզ այդպիսի երկիր: Սա իմ սերնդի պահանջն է: Եւ այդ պայմաններում այլեւս Արցախի եւ Հայաստանի մասին մտածելը դառնում է անհնար: Փակեք դռները մեր մոտալուտ բընամու՝ քաղաքացիական պատերազմի առաջ:

Վերջապես պատմությունը՝ մեր ամենասուրբ ուղեցույցը, որ դարձել է ընդամենը մշակութային հուշարձան: Ինչո՞ւ այսօր չենք վերադառնում մեր անցյալի էջերին: Մի՞թե նորից մոռացանք մեր հին սխալները: Մի՞թե ակնհայտ չէ, որ գնում ենք մի նոր Բաթումի պայմանագիր II հազար քառ. կմ «հայրենիքով», որ պատմության կաղ կրկնությունն է: Վաղը զղջալու ենք:

Եկեք բոլոր ուժերը, մեր դիվանագիտական միտքը ներդնենք, մի կողմ նետենք մեզ յուրահատուկ հուզական մտածելակերպը եւ աշխատենք չկանգնել մի նոր Ավարայրի ու Սարդարապատի առջեւ: Սխալվում ենք Ավարայրը մեր ուժը համարելով՝ այն մեր տկարության վերջին աստիճանն է: Ոչ մի քաղաքակիրթ ժողովուրդ իր լինել չլինելու հարցը չի վճռի մի ճակատամարտով: Հարյուր տարի տեւած պատերազմից երբեք կախված չէր Անգլիայի կամ Ֆրանսիայի գոյության հարցը: Թիվ ու հաշիվ չկա, թե քանի անգամ է մեր առաջ դրվել այդ հարցը, եւ քանի անգամ ենք՞ մի ճակատամարտով «փրկվել»: Ու դրանով մենք «հերոսական» ենք, «անպարտելի»:

Կույր ժողովուրդ:

Այսօրվա մեր ուղին մեզ տանում է մի նոր Ավարայր: Կրկի՞ն բարոյական հաղթանակ: Եկեք մտածենք, քանի դեռ շուտ է: Վաղն ուշ կլինի:

Եւ դեռ ուզում ենք պատերազմել: Ուզում ենք հող վերցնել: Հողն ուժ է: Ունե՞նք ուժ:

Ազգի առաջնորդներ, մտավորականներ, կուսակցական գործիչներ, նորօրյա «ազգային ջոջեր», հաշվե՞լ եք արդյոք ամեն ինչ, մտածե՞լ եք վաղվա մասին:

Մտածո՞ւմ եք, պարոնայք խմբագիրներ, երբ թերթի առաջին էջին մեծ տառերով տպում եք մեր տղաների մահագրերը, մտածո՞ւմ եք, որ վաղը չենք ունենալու առողջ սերունդ, մտածե՞լ եք, որ այս պատերազմը ջախջախելու է մեր ազգային գենոֆոնդը, այլասերելու է մի ամբողջ սերունդ:

Մտածեք, մի պահ մտածեք, թե ով է շահում այս պատերազմում: Ամեն ինչին նայեցեք ռեալ: Արբնացեք մոծակաձայից:

Դուրս եկեք ձեր տաք սենյակներից: Նայեցեք չորս կողմը, լավ նայեցեք: Անդունդ եք տեսնելու: Բացեք ձեր աչքերը եւ կանգ առեք: Հասկացեք, չունենք ապագա, եթե անդունդի եզրին անգամ չենք բացելու աչքերս: Զգուշացեք, պարոններ: Դանիացու դարեր առաջ ասված խոսքը այսօր մերն է դարձել. «Լինել, թե չլինել, այս է խնդիրը»:

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
«Գալիլ» ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետի ուսանող

digitised by A.R.A.R.@

Քրեական

ԻՆՏԵՐՊՈԼԸ ՊԱՅՔԱՐՈՒՄ Է ԲՈԼՈՐ ՃԱԿԱՏՆԵՐՈՎ

Բազմաբնույթ հանցագործությունների դեմհանդիման ոստիկանության միջազգային կազմակերպությունը Ինտերպոլը հարմարվում է նոր ոլորտներին

Բալկաններով անցնող մաֆսանենգության ուղիներ, տարբեր երկրների մաֆիաներ, մարդու օրգանների եւ նույնիսկ երեխաների գաղտնի վաճառք, երեկվա խաղախություններ եւ այսօրվա հանցագործություններ. Ինտերպոլը հարմարվում է նոր ոլորտներին եւ շարունակում գոյատեւել:

Հանցագործությունների թվի մտահոգիչ աճի պայմաններում նա վերջերս ընդունեց առաջիկա տասը տարվա գործողությունների ծրագիր: Ինտերպոլի առդեն նախկին նախագահ Իվան Բարբոն այն ներկայացրեց Դաքարում նոյեմբերի 4-10-ը Բրեական ոստիկանության միջազգային կազմակերպության ընդհանուր ժողովին մասնակցելու եկած 133 անդամ երկրների պատվիրակներին:

Բնականաբար, թմրադեղերի առեւտրի դեմ մղվող պայքարը գտնվում է Ինտերպոլի գերակայությունների առաջին շարքում. Լիոնում Ինտերպոլի նստավայրում գտնվող 270 գործակալները դրան են նվիրում իրենց գործունեության կեսը: Կազմակերպությունն իր անդամ երկրներին նաեւ օգնում է ընդունելու համադասասխան օրենսդրություններ:

Մասնավորապես, 1984 թվականից ի վեր 20 երկրներ օրենքներ են ընդունել թմրադեղերի առեւտրից ստացված «կեղտաս դրամի» բացահայտման, սառեցման եւ բռնագանձման վերաբերյալ: 1990 թվականին Ինտերպոլի հեռահաղորդակցությունների ցանց է տեղադրվել Կարիբյան ծովի եւ Կենտրոնական Ամերիկայի 27 պետություններում: Եկող տարի նույնը կարվի Հարավային Ամերիկայում եւ Արեւմտյան ու Կենտրոնական Աֆրիկայում:

Արեւելյան Եվրոպան կիսեցի դրան: Այնտեղ նկատելի է հանցագործությունների սրընթաց աճ: Սահմանների բացումը եւ նոր պայմաններին ոստիկանության անսովոր լինելն այդ երկրներում երեք տարուց ի վեր նպաստել են միջազգային շարագործների ակտիվությունը: Այնտեղ ծաղկում են թմրադեղերի, ավտոմեքենաների եւ արվեստի գործերի գաղտնի առեւտուրը, ինչպես նաեւ տնտեսական ու ֆինանսական հանցագործությունները:

Հանցագործությունների նոր «պայթյունի» դեմհանդիման Ինտերպոլը գործեց արագորեն: 11 նոր երկրներ ընդունվեցին կազմակերպության մեջ 1989-91 թթ.: Դաքարում ս.թ. նոյեմբերին կազմակերպությանը հարեցին 11 ուրիշ երկրներ (Հայաստան, Ադրբեջան, Բոսնիա-Հերցեգովինա, Խորվաթիա, Էստոնիա, Գվինեա-Բիսաու, Ղազախստան, Լատվիա, Նամիբիա, Սլովենիա ու Ուկրաինա): Դա կարող է նպաստել, օրինակ, Բալկաններով անցնող մաֆսանենգության գաղտնի ուղիների բացահայտման հարավսլավիայի պատերազմն սկսվելուց հետո հերոինը անցկացվում է գլխավորապես Թուրքիայով, Բուլղարիայով, Ռումինիայով, Հունգարիայով, Չեխո-Սլովակիայով եւ Գերմանիայով: Տեղեկությունների կուտակման շնորհիվ Ինտերպոլը 1992 թ. մայիսի 5-ից մինչեւ հուլիսի 4-ը կարողացավ բռնագրավել 386 կգ հերոին:

Ինտերպոլը բռնել է թուրք վարորդին. թմրադեղ բենզաբաքում

Կազմակերպությունը գործում է նաեւ ուրիշ ուղղություններով. խաղախություններ, ծովահենություն, ռադիոակտիվ նյութերի գաղտնի վաճառք, տեղեկագիտական խաբեություններ եւ այլն:

Ավանդական է մնում գործունեությունը կազմակերպված հանցագործության (մաֆիա, կամորա, կոլումբիական կարտելներ, ճապոնական յակուսաներ, չինական տրիադներ եւ այլն) դեմ, մասնակցելով հատուկ գործողությունների ծրագրերի:

1989 թ. Ինտերպոլի գործունեության ոլորտում Ֆրանսուա Միտերանի խորհրդով ավելացավ մի նոր ուղղություն: պայքարը երեխաների միջազգային վաճառքի, մանկական պոռնկության շահագործման, «սեռական» զբոսաշրջիկության դեմ: Այն ժամանակվանից բացահայտվել են այդ գաղտնի առեւտրի բազմաթիվ ցանցեր:

Այս ընդարձակ ծրագիրը հաջողությամբ առաջ տանելու համար Ինտերպոլը Բանգկոկում եւ Բուենոս Այրեսում ստեղծել է երկու շրջանային խորհրդաժողով, որոնց շուրջ հարյուր միջազգային հսմագործակցության ընդլայնմանը: Բազմաբնույթ այդ ցանցով է անցնում վերջին երկու տարում Եվրոպայում բռնագրավված հերոինի 70 տոկոսը (ավելի քան 16 տոննա): Ցանցը վերահսկում են բուրքական քրեական կազմակերպություններ, որոնք հենվում են եվրոպական երկրներ գաղթած հանցակիցների վրա: Թմրադեղերն առաքվում են միջազգային բեռնատարներով, որոնք կարող են սահմաններն անցնել առանց մաքսային ձեւակերպումների: Բացահայտվել է հինգ երթուղի: Բոլորն էլ անցնում են Թուրքիայով: Բայց կավելանա երրորդը Աբիջանում: Դա թույլ է տալիս գործողությունները համատեղել խոցելի գոտիներում: *«Ի դեպ, ավելացնում է Իվան Բարբոն, մենք ավելի շատ ձգտում ենք աշխատել ուրիշ գործակիցների հետ համատեղ, որոնցից են ՄԱԿ-ի թմրադեղերի միջազգային վերահսկման ծրագիրը, ինչպես նաեւ ոստիկանական բազմակողմ կառույցների հետ, որոնցից են Լատինական Ամերիկայում Ռիոյի խումբը, Եվրոպայում Տրեւիի խումբը եւ շուտով ստեղծվելիք Եվրոպոլը: Կասկած չկա, որ հաղթելու է զուգորդությունը եւ ոչ թե մրցակցությունը»:*

Ամեն տարի տարբեր ոստիկանությունների մոտ մեկ միլիոն ուղերձներ են անցնում Ինտերպոլի միջոցով: Կարելի է ասել, որ կազմակերպությունն անհրաժեշտ գործիք է դարձել հանցագործությունների դեմ մղվող պայքարում: ■

Քրեական

Շեյխ Աբդուլ-Ռահմանի դատը ԱՄՆ-ում

Ամերիկայում գաղթի հարցերով զբաղվող մարմինները փորձում են ԱՄՆ-ից հեռացնել եգիպտոսի իսլամական արմատական հոսանքի ամենահայտնի ղեկավարներից մեկին՝ շեյխ Օմար Աբդուլ-Ռահմանին, որը 1990 թ. հուլիսից ի վեր բնակվում է այնտեղ: Հայտնի է, որ շեյխ Աբդուլ-Ռահմանը ներակայացվել էր եգիպտական դատարան նախագահ Անվար Ալ-Սադաթի սպանության հրահրման համար: Շեյխ Աբդուլ-Ռահմանը, որը տուրիստական վիզայով էր մտել ԱՄՆ, իր ողջ ժամանակը անցկացնում է Նյու Յորք եւ Նյու Ջերսի նահանգների միջեւ տեղաշարժվելով: ԱՄՆ-ի գաղթի վարչությունից մի աղբյուր հայտնեց, թե Նյու Յորքի դատարաններից մեկը հունվարի 20-ին քննարկել է նրան հեռացնելու որոշումը: Հատկանշական է, որ եգիպտացի կույր շեյխը ժամանակավոր գրանցում էր ստացել այն բանից հետո, երբ ամուսնացել էր Ամերիկայի քաղաքացու հետ: Հետաքրքիրն այն է, որ Կահիրեն ԱՄՆ-ից չի պահանջում նրա վերադարձը, գուցե երկու երկրների միջեւ մեղադրյալների հանձման պայմանագրի բացակայության պատճառով: Հայտնի է, որ ԱՄՆ-ի պետդեպարտամենտի պատասխանատուներն իրենց վերապահումն էին հայտնել նրան տուրիստական վիզա տալու կապակցությամբ: Իսկ ԱՄՆ-ից օտարերկրյա հոդատակների հեռացումը հետաքրքիր չէ, քանզի տվյալ անձը կարող է դատարաններում դիմակայել գաղթի վարչության որոշումներին եւ դրանով հեռացումը հետաձգել մի քանի տարով: ■

Տեղեկատ

Ռուսաստանում 470 հազար փախստական

Այժմ Դաշնակցային Ռուսաստանում գրանցված է 800 հազար հարկադրաբար գաղթած վերաբնակիչ եւ ռազմական հակամարտության շրջանները լքած 470 հազար փախստական: Այդ մասին նոյեմբերի 30-ին Մոսկվայում կայացած մամուլի ասուլիսում հաղորդեց Ռուսաստանի Ֆեդերալ գաղթային ծառայության ղեկավար Տատյանա Ռեգենտը:

Նրա խոսքերով, բոլոր փախստականներն ու գաղթականները Ռուսաստան են մեկնել նախկին Խորհրդային Միության հանրապետություններից: հիմնականում Տաջիկստանից, Ադրբեջանից, Աբխազիայից, Մերձբալթյան երկրներից, ինչպես նաեւ Պրիդնեստրովիից:

Տ. Ռեգենտն ասաց, որ ծառայության կանխատեսմամբ մինչեւ 1993 թ. վերջը Ռուսաստան կժամանի առնվազն 2 միլիոն մարդ: Նա նշեց, որ փախստականների եւ գաղթականների իրավիճակն զգալիորեն բարդանում է նրանց կարգավիճակը որոշելու համար օրենսդրական բազայի բացակայությամբ:

Տատյանա Ռեգենտը հաղորդեց, որ ընթացիկ տարում 3 միլիարդ ռուբլի է հատկացվել «Գաղթ» ծրագրի իրականացման համար: Այդ դրամը հիմնականում օգտագործվել է կացարանների շինարարության եւ նպաստների տրամադրման համար: Նրա խոսքերով, այժմ հնարավոր է փախստականներին եւ գաղթականներին տրամադրել 300 հազար ռուբլու անտոկոս վարկեր, որոնք կօգտագործվեն առանձնատների կառուցման համար: Այդ գումարը հետագայում կինդեքսավորվի:

Տ. Ռեգենտը հաղորդեց, որ այժմ Ռուսաստանից դուրս աղքատ է 24,5 միլիոն ռուս, որից 12 միլիոնը Ուկրաինայում, 6 միլիոնը Ղազախստանում, 1 միլիոնը Բելառուսում:

Նրա կարծիքով ֆեդերալ գաղթային ծառայության գործունեության գլխավոր ուղղություններն են գաղթային հոսանքների կարգավորումը, գաղթականների իրավունքների պաշտպանությունը եւ Ռուսաստանում գաղթային վերահսկողության ստեղծումը: ■

Ազգ «Ազգ» թերթի համակարգչային ծառայությունը կատարում է Apple® Macintosh®

Համակարգիչների տեխնիկական որակյալ սպասարկում եւ ուսուցում, գովազդների, խորհրդանիշների, ֆիրմային նշանների, հրավիրատոմսերի, տարբեր տեսակի ազդագրերի եւ ընդհանրապես համակարգչային ձեւավորման պատվերներ, գունավոր նկարների եւ ձեւավորումների գունաբաժանում ժապավենի վրա 1200 եւ 2400 dpi խտությամբ: Դիմելով մեզ, դուք կարող եք ձեռք բերել հայերենի ավտոմատ տողադարձիչ:

Դրանք կկատարվեն ձեր երեւակայածից բարձր մակարդակով:

Հասցեն. Երեւան, Հանրապետության 47, «Ազգ» թերթ. ☎ 58-18-41, 56-28-63

Լուրերի Հոսք

Աբսկանի կայազորը ամենաբրեաթինն է Սիբիրի ռազմական օկրուգում

Աբսկանի գարնիզոնն ամենաբրեաթինն է Սիբիրի զինօկրուգում: 1992 թ. ռազմական ասյանի կողմից այստեղ դասվել են 57 զինծառայողներ: Ամեն օր սպաները բախվում են զինվորների կամայականությունների հետ: Որոշես կանոն զինվորները դատարանի առաջ են կանգնում բռնաբռնության, սպանության կամ գողության համար: Զինվորական ղեկավարությունը սա բացատրում է Ռուսաստանի այլ շրջաններից այստեղ տեղափոխված զորքերի մեծ քանակությամբ:

Ղրիմի քաղաքական կազմակերպությունների կոչը

Սինֆերոպոլում կոմունիստների միության, աշխատավորների սոցիալիստական կուսակցության, լիբերալ-դեմոկրատական կուսակցության, «Սլավոնական միություն» կուսակցության Ղրիմի կազմակերպությունները, ինչպես նաեւ Ղրիմի հանրապետական շարժումը երկուշաբթի օրը հանրահավաք են անցկացրել ԽՍՀՄ-ը վերականգնելու պահանջով: Վ. Ժիրինովսկու կուսակցության անդամները կոչ են արել վերականգնել մեծ Ռուսաստանը, որի կազմի մեջ առաջարկել են մտցնել բոլոր նախկին խորհրդային հանրապետությունների տարածքը, ինչպես նաեւ Լեհաստանը, Ֆինլանդիան եւ Այլասկան: Հանրահավաքի մասնակիցները դիմել են Համագործակցության բոլոր պետությունների խորհրդարաններին եւ ՄԱԿ-ին, պահանջելով Ղրիմը պաշտպանել Ուկրաինայի ազգայնամոլությունից: Ղրիմի հանրապետական շարժման ղեկավար Յուրի Մեշկովը եւ մի շարք ուրիշ քաղաքական կազմակերպությունների ղեկավարներ երկուշաբթի օրը Մոսկվա են մեկնել Դաշնակցային Ռուսաստանի ժողովրդական պատգամավորների 7-րդ համագումարի բացմանը հասնելու եւ այնտեղ ղրիմցիների անունից ելույթ ունենալու մտադրությամբ:

Թուրքմենստանն ու Թունիսը ճնարկում են շրջանային խնդիրներ

Դեկտեմբերի 1-ին Թուրքմենստանի նախագահ Սապարմուրատ Նիյազովը բանակցություններ վարեց Թունիսի կառավարական պատվիրակության հետ, որը գլխավորում էր Թունիսի արտգործնախարարության պետքարտուղար Սաիդ Բեն Մուստաֆան: Հանդիպումից հետո «ԻՖ»-ին տված հարցազրույցում Բ. Մուստաֆան հաղորդեց, որ կողմերը ծրագրել են իրենց դիրքորոշումը շրջանում ստեղծված իրավիճակի շուրջ, ինչպես նաեւ ճնարկել են առեւտրի, մշակույթի, գիտության եւ տեխնիկայի ոլորտում երկու երկրների համագործակցության հնարավորությունները: Յուրը Ս. Նիյազովին հանձնեց իր երկրի նախագահի անձնական ուղերձը, ինչպես նաեւ Թունիս այցելելու հրավերը:

Նոր Բալկանյան պատերազմը չի բացառվում

Ալբանիայի նախագահ Սալլի Բերիշան չի բացառում նոր բալկանյան պատերազմի բռնկումը Բալկաններում: Նրա կարծիքով, նման վախճանի կարող են հանգեցնել իրադարձությունների զարգացումը Կոսովոյում եւ Մակեդոնիայում, որ ոտնահարվում են ալբանցիների ազգային ինքնորոշման իրավունքները (Կոսովոյում ալբանցիները կազմում են շուրջ 85 տոկոս, Մակեդոնիայում 40 տոկոս): Ինչ վերաբերում է իր երկրին, ապա Բերիշան կարծում է, որ այն կզարգանա իբրեւ աշխարհիկ հասարակություն, որը սերտ կապերի մեջ կլինի ինչպես իսլամական, այնպես էլ քրիստոնեական աշխարհների հետ: Հիշեցնենք, որ Ալբանիայի 2.300 հազ. բնակիչների 80 տոկոսը մահմեդական է, 20 տոկոսը ուղղափառ է եւ 10 տոկոսը կաթոլիկ:

digitised by A.R.A.R.@

Լուրերի Հոսք

Թեժ մարտեր Դուշանբեի մատույցներում

Չնայած խաղաղության հաստատման մասին հավաստիացումներին, Դուշանբեի մատույցներում թեժ մարտեր են ընթանում տարբեր զինված խմբավորումների միջև, «Ազատություն» կայանին հաղորդել է Տաջիկստանի ՊԱԿ-ի բարձրաստիճան պաշտոնյա Ռաջաբովը: Օրերս Տաջիկստան կժամանի ԱՊՀ զինված ուժերի դիտորդների խումբը, թվով 18 բարձրաստիճան սպա: Միաժամանակ քաղաքական դիտորդներն անհանգստացած են, որ Ռուսաստանի եւ Միջին Ասիայի հանրապետությունների խորհրդարանները կարող են չվավերացնել իրենց երկրների զինծառայողներից բաղկացած խաղաղարար ուժերի առաքման որոշումը, ինչպես դա արդեն մեկ անգամ եղավ Ղրղզստանում: Խորհրդարանների մերժողական որոշումը հիմնավորված կլինի, քանզի իրական վտանգ կա, որ ժամանակի ընթացքում մահմեդական զինծառայողներից բաղկացած միջինասիական զինվորական ստորաբաժանումները կվարակվեն «տաջիկական սինդրոմով»: RFI կայանը հաղորդում է, որ Միջին Ասիայի հինգ հանրապետություններին տրվել է զարգացող երկրների կարգավիճակ:

Աբխազիան ընդդեմ Սերբիայի

Ինչպես հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով զբաղվող հանձնախումբը նախկին Հարավսլավիայում տեղի ունեցող բոլոր արյունալի իրադարձությունների մեղքը բարդել է Սերբիայի եւ այդ տարածքները զբաղեցնող սերբ բնակչության վրա: Սերբերը մեղադրվում են այլ ժողովուրդների դեմ էթնիկական մաքրումների իրականացման, սպանությունների, խոշտանգումների եւ անգամ ոչարբերաբար բռնաբարությունների մեջ: Հանձնախումբը դիմել է աշխարհի երկրներին ճնշակելու այն հարցը, թե որքանով են սերբերի գործողությունները համապատասխանում «ցեղասպանություն» որակվորմանը: Միաժամանակ կայանը հաղորդում է, որ Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդը ելույթ ունենալով իր երկրում գումարված իսլամական երկրների արտգործնախարարների հանձնաժողովում, հայտարարել է, որ իսլամական երկրները միջազգային կազմակերպությունների կողմից նախատեսված գործողությունների ժրջանակներում կանեն ամեն ինչ, որպեսզի կանգնեցնեն սերբերի ծավալապաշտական նկրտումները:

Աբխազները շարունակում են հարձակումը Օչամչիրայի շրջանում

Աբխազական խմբավորումները, որոնք օրերս գրավել են Արադու, Մերկուլա, Քոչարա եւ Ցխենցկար գյուղերը, շարունակում են զարգացնել հարձակումը Օչամչիրայի շրջանում: Երեքշաբթի երեկոյան նրանք մտել են Ցագերա գյուղը, սակայն չորեքշաբթի առավոտյան նորից վերադարձել են հին դիրքերը: Երեքշաբթի օրը վրացական զորքերը փորձել են օգնության հասնել Ցագերայում շրջապատված իրենց ընկերներին, սակայն կանգնեցվել են աբխազական խմբավորումների կողմից: Աբխազիայի գործերով Վրաստանի պետնախարար Գեորգի Խաինդրավան հայտարարել է, թե վրացական զորքերը Քոչարա գյուղը լքել են խուճապի պատճառով, չնայած ունեցել են բավականաչափ քանակությամբ զենք եւ զրահատեխնիկա:

Անդրզինօկրուգի ունեցվածքը ԱՊՀ երկրներին

Վեց հոգուց կազմված պատգամավորական խումբը կգբաղվի Անդրզինօկրուգի ռազմական տեխնիկան ԱՊՀ երկրներին բաշխելու գործով: Այդ մասին «Սնարֆ»-ի թղթակցին հայտնեց Վրաստանի ԳԽ մամուլի քարտուղար Ռամին Չելիձեն: Նա նշեց, որ խորհրդարանի որոշումն Անդրզինօկրուգի ռազմական խորհրդի դիմումի պատասխանն է, որտեղ խորհրդարանին այս հարցով փաստաթղթեր տրամադրելու պատրաստակամություն է հայտնվում:

Մշակույթ

Երկար սպասված համերգ

Կան կատարողական խմբեր, առանց որոնց անհնար է պատկերացնել մեր այսօրվա երաժշտական կյանքը: Նման խմբերից է Թաքուլ Ալբունյանի անվան երգի-պարի պետական խումբը: Գեղարվեստական հայտնի ավանդույթներ ունեցող այս կոլեկտիվի անունը սակայն վերջին մեկուկես-երկու տարիների ընթացքում չի հնչում բեմերից, իսկ երբեմն-երբեմն հեռուստաէկրանից եթեր տրվող կատարողական համարները նկատելիորեն տարիների վաղեմություն ունեն: Մեկ կարող էիր մտածել ամենավատը, թե երգի խումբը լուծարվել է, չդիմանալով ժամանակի անբարենպաստ պայմաններին, մեկ էլ ամենալավը, թե հավանաբար ալբունյանցիները երկարատեւ շրջագայությունների են մեկնել արտասահմանյան երկրներ՝ ներկայացնելու հայկական երգն ու պարը: Օրերս քաղաքի տարբեր մասերում հայտնված ազդագրերը միաբերան ազդարարեցին բոլորիս սիրելի կոլեկտիվի առաջիկա համերգի մասին եւ գրեցին լավ թե վատ կանխատեսումները: Երկար սպասված այդ համերգի նախօրյակին էլ որոշեցինք հանդիպել ու զրույց ունենալ խմբի գեղարվեստական ղեկավար, կոմպոզիտոր Մելիք Մավիսակալյանի հետ:

– Պրն. Մավիսակալյան, որտե՞ղ էր Ձեր ղեկավարած խումբն այս մեկուկես-երկու տարիներին ինչո՞վ էր զբաղված, ինչո՞ւ համերգներ չէիք տալիս:

– Անցյալ տարվա աprիլից, երբ ես նշանակվեցի Թաքուլ Ալբունյանի անվան խմբի գեղարվեստական ղեկավար, մի քանի ամիս զբաղվեցի զուտ կազմակերպական հարցերով: Իհարկե, զուգահեռաբար սկսեցինք աշխատել համերգային նոր ծրագրի վրա: Զգալի աշխատանք էր կատարված, երբ սկսվեցին գրտերն ու հասկանալի պատճառներով մեր սկսած գործը ընդհատվեց: Այն վերսկսեցինք արդեն այս տարվա գարնանը: Երգչախումբը եւ նվագախումբը երկու ամիս առաջ ավարտել-վերջացրել էին նոր ծրագիրը, սակայն խնդիրներ կային կազմված պարախմբի հետ:

Բանն այն է, որ երկար ժամանակ հիմնական պարուսույց չունեինք եւ ինձ որպես գեղարվեստական ղեկավարի չէին բավարարում հրավիրվածների պարային բեմադրությունները:

– Իսկ ինչպե՞ս է վիճակն այժմ:

– Արդեն մի քանի ամիս է, ինչ օպերային բատրոնից հրավիրել ենք հայտնի պարող Հովհաննես Դիվանյանին: Բայց բոլոր դեպքերում բեմադրությունների համար հրավիրում ենք եւ ուրիշների՝ մեր հանրապետության բոլոր հայտնի մասնագետներին, որովհետեւ հնարավոր չէ, որ միայն մեկ հոգին ողջ համերգային ծրագիրն ինքը բեմադրի: Այս դեպքում բնականաբար միօրինակություն կմտնի կատարման մեջ: Դժբախտաբար պարուսույցները քիչ են եւ առայսօր չունենք մի հաստատություն, որ այս կարգի կադրեր պատրաստի:

– Ի՞նչ եք կարծում, համերգային գործունեության այս հարաբերական դադարը չի՞ ազդել խմբի կատարողական մակարդակի վրա:

– Չեմ կարծում, որովհետեւ իսկապես այս դադարը հարաբերական է նեմ, ոչ նորմալ պայմաններ, երբ ելույթի հիմնական տեղ չունենք: Վարժված ենք մեծ բեմի, մինչդեռ ֆիլհարմոնիկ փոքր համերգասրահում մեզ ընդամենը երկու փոքրասեղյակ է հատկացվել: Մեր ունեցվածքը դեռ գտնվում է ֆիլհարմոնիկ մեծ դահլիճի նկուղում: Կարող էինք համերգ տալ դեռ հոկտեմբերին կամ նոյեմբերին, բայց օպերային բատրոնի դահլիճն այս ամիսներին ոչ մի ազատ օր չուներ: Կամ ի՞նչ անուն տալ այն երեւույթին, երբ դրամ չունենք նոր հագուստներ պատվիրելու համար:

– Եթե կարելի է, մի քանի խոսքով ներկայացրեք ձեր պատրաստած նոր ծրագիրը:

– Այս ժամանակահատվածում պատրաստել ենք մի համերգից էլ ավելի ծրագիր, առա խիստ ընտրություն կատարել: Համոզմունքս այն է, որ իմ եղել, առանձին ելույթներ ենք ունեցել այսպես կոչված հավաքների համերգներում, կատարվել են նկարահանումներ, իսկ փորձերը ոչ մի անգամ կանգ չեն առել: Մեր նպատակը սոսկ ցուցադրելը չի եղել, այլ նոր, բարձր ծրագիր պատրաստելը: Կատարողականի վրա շատ ավելի ազդում են ցուցը, այս, չգիտեմ ինչպես անվանեմ, ոգեւորությունը: Դրանք ենք ունեցել, որ ներկայացվող համերգի ամբիոնի մոտ ինքնաբերաբար ստեղծվել է մի տեսակ ոգեւորություն, որ

Պատկերասրահ

ՀԵՐԹԱԿԱՆ ԳՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌԵՎՍ ՄՈՒԹ

Մեր թերթի նախորդ համարում տեղեկացրել էինք, որ շաբաթ օրը, նոյեմբերի 28-ին Հայաստանի ազգային պատկերասրահից չորացված հանգամանքներում անհետացել է անցյալ դարի ռուս նշանավոր բնանկարիչ Իսահակ Լեւիտանի «Գարնանային էտյուդ» աշխատանքը (30x16): Ինչպես երեկ տեղեկացանք պատկերասրահի գիտաշխատող Սերգեյ Խաչիկոզյանից, «անհայտ հանգամանքները» շատ նման են մի քանի ամիս առաջ պատկերասրահից կատարված մեկ այլ գողության հանգամանքներին: Այն ժամանակ նույնպես գողացվել էր բավականին փոքր չափերի նկար, եւ այն էլ՝ օրը ցերեկով: Սենյակի հսկիչը մի քանի ոտքով դուրս էր եկել, եւ հանցագործը հասցրել էր ոչ միայն գողանալ նկարը, այլեւ փոխարենը մեկ այլ նկար կախել: Այս անգամ նույնպես գողությունը կատարվել է օրը ցերեկով՝ ժամը 11.30-ի եւ 14.00-ի միջեւ: Բանն այն է, որ նախորդ գողությունից հետո պատկերասրահի տնօրենը եւ ցուցահանդեսի սենյակի վարիչն ամեն օր ստուգում են բոլոր նկարները: Ժամը 11.30-ին բոլոր նկարները տեղում են եղել, եւ պատկերասրահի տնօրենը մեկնել է մասնակցելու Մարտիրոս Սարյանի բանգարանի 25-ամյակին նվիրված արարողությանը: Կորուստը հայտնաբերվել է մոտ ժամը 14-ին: Սրահի հսկիչը տեսնելով, որ սրահում մարդ չկա, մի քանի ոտքով դուրս է եկել: Ըստ երեւույթին այդ կարճ ժամանակահատվածն էլ բավական է եղել հանցագործին գողանալու մեծաչափ ստեղծագործությունը, որը հետքերով կարելի էր բացել հագուստի տակ:

Ի դեպ, նախորդ գողությունից հետո երեք հսկիչներն ազատվել էին աշխատանքից, իսկ պատկերասրահի տնօրեն Շահեն Խաչատրյանը նկատողություն էր ստացել: Այս անգամ եւս հսկիչը (գիտաշխատողի բնորոշմամբ՝ բարեխիղճ եւ ազնիվ կին) ազատվել է աշխատանքից: Հետաքրքիր է նաեւ, որ Հայաստանի ազգային պատկերասրահից գողացվում է Լեւիտանի աղեղն երրորդ կտավը: Դրանցից առաջինը գտնվել եւ վերադարձվել է, երկրորդն առաջվա պես որոնվում է: Ինչ վերաբերում է պատկերասրահից կատարված նախորդ գողությանը, ապա հետաքննությունը մինչեւ այժմ էլ շարունակվում է:

Դեռեւս նախորդ գողության ժամանակ, երբ զրուցում էինք պատկերասրահի աշխատակիցների հետ, նրանց մեծ մասն այն կարծիքին էր, որ գողությունների հիմնական նպատակը տնօրենին վարկաբեկելն է: Այս անգամ եւս գիտաշխատողը չբացառեց, որ գողությունը կարող է ուղղված լինել Խաչատրյանի դեմ ծավալված պայքարի հերթական անազնիվ քայլը լինել: Նա տեղեկացրեց նաեւ, որ դեռեւս տարիներ առաջ, երբ անհրաժեշտություն էր ստեղծվել գոնե առավել արժեքավոր ստեղծագործությունների համար ստեղծել ազդանշանային համակարգեր, որոնք կգործեին նաեւ մարտկոցներով եւ հոսանքի անջատման դեպքում նույնպես կաշխատեին, մշակույթի նախարարությունը մերժեց դրա համար գումարներ հատկացնել (այն ժամանակ յուրաքանչյուր հարկի համար անհրաժեշտ էր 6 հազար ռուբլի): Եւ այժմ, ըստ նրա, նույն աշխատողները մեղադրում են պատկերասրահի տնօրենին:

Ի դեպ, պատկերասրահի տնօրեն Շահեն Խաչատրյանը երեկ մեկնել է ԱՄՆ մասնակցելու բանգարանային գիտաժողովին, ինչպես նաեւ հիմնելու Հայաստանի ազգային պատկերասրահի բարեկամների միջազգային միություն: Պրն. Խաչիկոզյանը հույս հայտնեց, որ հնարավոր կլինի այդ միության միջոցով իրականացնել ազդանշանային համակարգերի ծրագիրը:

Իհարկե, բոլոր երկրների բանգարաններում էլ կատարվում են նման գողություններ, եւ դրանցից առաջացած չէ ոչ ոք: Բայց այլ պետություններում արվում է ամեն ինչ դրանք կանխելու համար: Մի՞թե չի կարելի ավելի շատ ուշադրության արժանացնել Հայաստանի ազգային պատկերասրահը, որը բավականին հարուստ է եւ իսկապես կարող է մեր հանրապետության պարծանքը լինել:

ԱՐԱՄ ԱՐՈՒԹՅԱՆ

Ջաբա Իոսելիանին երեկ կեսօրից հետո ժամանեց Սուխում, որտեղից էլ կմեկնի Օչամչիրա: «Մխեդրիոնի»ի ղեկավարի պահակախմբից Թամազ Պանչուլաձեն «Սնարֆ»ի թղթակցին ասաց, որ Իոսելիանիի այցելության նպատակը «վրացական հողը ավազակներից մաքրելն է»: Պանչուլաձեի խոսքերով, Ջաբա Իոսելիանիի Օչամչիրայում գտնվելը կբարձրացնի վրացի զինվորների մարտական ոգին, կնպաստի վրացական զորքի առաջխաղացմանը: ■

Հանդես Լույս

Այնուամենայնիվ Իսրայելն օգնում է Ադրբեջանին

Հակառակ «Ազգ»ի նախորդ համարում տպագրված Իսրայելի պաշտոնական աղբյուրների այն հերքմանը, թե իբր Իսրայելն Ադրբեջան չի ուղարկում զենք ու ռազմական հրահանգիչներ, ինչպես նաեւ չի վարձեցնում ադրբեջանցի սպաներին Իսրայելում, հավաստի պաշտոնական աղբյուրների համաձայն, իսրայելյան ռազմական մասնագետներն իրականացնում են ադրբեջանական զինված ուժերում հրթիռների հավաքման ընթացքը: Իհարկե, չի կարելի ակնկալել, թե Իսրայելի պաշտոնական աղբյուրները կհաստատեն այս փաստը, բանզի փորձը ցույց է տալիս, որ նման դեպքերում ամեն ինչ արվում է խիստ գաղտնի ու անգամ հրաժարակվելուց հետո էլ բանիցս մերժվում է:

Եւ հետո, Իսրայելի մոսկովյան դեսպանատունն առայժմ հայտարարում է, թե պաշտոնապես չի աջակցում, որը չի բացառում անհատ անձանց համագործակցությունն ադրբեջանական կողմի հետ:

Ա. Հ.

ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ
DIAGNOSTICA

Դիմեք մեր բժշկական կենտրոններին, եւ Ձեր առողջությունը հուսալի ձեռքերում կլինի:

Երեւան, Աջափնյակ, Մարգարյան փ. 6, հեռ. 35-01-58, 35-13-01
Քանաքեռ, Ֆանարջյան փ. 55, հեռ. 28-75-24,
Կենտրոն, Թումանյան փ. 23, հեռ. 53-85-81
Գյումրի, Շչեդրինի 54ա, հեռ 3-60-72
Գորիս, Մաշտոցի փ. 3, հեռ. 2-26-87

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

☛ Առաջարկում է հիվանդությունների ախտորոշման բարձրագույն մակարդակ:
☛ Առաջարկում է ձեր առողջությունը ողջ կյանքի ընթացքում:
☛ Միայն մեզ Դուք կարող եք դիմել՝ բոլոր հիվանդությունների դեպքում եւ բոլոր բժշկական հարցերով, քանի որ «ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ»ն ոչ միայն միջազգային պահանջներին համապատասխանող ամենաժամանակակից սարքերն ու մասնագետներն ունի, այլեւ անհրաժեշտության դեպքում Ձեր բուժօգնությունը կազմակերպում է հանրապետությունից դուրս կամ համապատասխան մասնագետներ է հրավիրում:
☛ Միայն մեզ մոտ Դուք կարող եք ստանալ Ձեր ախտորոշումը կամ առաջարկել առողջությունը կայուն եւ ցածր գներով, անկախ ցույց տրվող բուժօգնության ծավալից եւ տեսակներից:
☛ Մենք ընդունում ենք բժիշկների տնային կանչեր (հեռ. 35-70-38)
Դուք կարող եք անցնել հետազոտությունները ավելի արագ եւ հանգիստ մթնոլորտում, եթե դիմեք մեզ ժամը 14.00-ից հետո կամ շաբաթ օրերը ժամը 9.00-ից մինչեւ 15.00:
☛ Ձեր հարմարության համար մենք աշխատում ենք ամեն օր (բացի կիրակի օրից), ժամը 8.30-ից մինչեւ 19.00, շաբաթ օրը՝ մինչեւ 15.00:

PUBLISET

Լուրերի Հոսք

Պայմանագրեր Բելառուսի, Լատվիայի եւ Լիտվայի հետ

Ադրբեջանի փոխվարչապետ Վահիդ Ահմեդովի Մինսկ եւ Ռիգա կատարած այցելությունների ժամանակ ստորագրվել են 1993 թ. Ադրբեջանի եւ Բելառուսի, Լատվիայի, Լիտվայի միջեւ առեւտրատնտեսական համագործակցության պայմանագրեր: Ըստ պայմանագրերի, Բելառուսը, Լատվիան եւ Լիտվան Ադրբեջանին մթերք կմատակարարեն նավթամթերքի դիմաց: Ինչպես երեքշաբթի օրը բացվում հայտարարեց Վ. Ահմեդովը, Բելառուսին վառելիք չի մատակարարվի, քանի որ Ռուսաստանից հումքի կրճատման պատճառով նավթավերամշակման գործարաններն աշխատում են 50 տոկոս հզորությամբ: Փոխվարչապետի խոսքերով, ներկա դրությամբ Ադրբեջանի համագործակցության չափը Բելառուսի հետ 150 մլն դոլլարի է, Լատվիայի եւ Լիտվայի հետ՝ 50-60 մլն: Վահիդովը նշեց, որ նման համաձայնագրեր կկնքվեն նաեւ Խոսրովիայի, Ղազախստանի եւ Ղրղզստանի հետ:

Բուրը Տաջիկստանին

Ջորջ Բուրը շնորհավորական հեռագիր է հղել Տաջիկստանի Գխ նոր նախագահ Իմոմալի Ռահմանովին: Նա հույս է հայտնել, որ փոփոխությունները վերջ կդնեն զինված առճակատումներին Տաջիկստանում: Հեռագրում ԱՄՆ իշխանությունները հանրապետությանը մարդասիրական տնտեսական օգնություն ցույց տալու պատրաստակամություն են հայտնել:

Չեչնիա. 7 տարի անօրինական զինված խմբավորում ստեղծողին

Երեքշաբթի օրը Չեչնիայի խորհրդարանն անօրինական զինված խմբավորումներ ստեղծելու համար երեսկան պատասխանատվության օրենք է ընդունել: Փաստաթղթի համաձայն, այդպիսի խմբավորում ստեղծողները, եթե չեն բացահայտվել ավազակության մեջ, կդատապարտվեն 3-7 տարվա ազատազրկման կամ կտուգանվեն աշխատավարձի հարյուրապատիկ չափով: Այս օրենքն ընդունելու անհրաժեշտությունը, պատգամավոր Ահմեդ Մալենգովի խոսքերով, պայմանավորված է Ռուսաստանի զորքերի դեմ սադրիչ գործողությունների վտանգով:

Դնեպրոպետրովսկում սպիդի 7 դեպք

Երկու երեխա եւ 5 մեծահասակներ ներկա դրությամբ Դնեպրոպետրովսկում հիվանդ են սպիդով: Այդ մասին «ԻՖ»ին հայտնեց մարզի գլխավոր սանիտարական բժիշկ Նիկոլայ Գլադինը: Նրա խոսքերով, 5 տարվա ընթացքում ստուգվել է մարզի բնակչության կեսից ավելին՝ 2 միլիոն մարդ: Սակայն սպիդի դեմ պայքարի ազգային կոմիտեի տվյալներով, հիվանդների քանակն առնվազն 10 անգամ գերազանցում է գրանցվածների թվին:

Դոլլարը խարկովում ռեկորդային գնով

Խարկովի կոմերցիոն «ՀԿ-բանկ»ը հասցրել է դոլլարի գնման եւ վաճառքի ամենաբարձր կուրսը: Բանկը դոլլարը գնում է 830 կուպոնով եւ վաճառում 1001-ով: Ուկրաինայի ազգային բանկը 1 ռուբլու դիմաց տալիս է 1,45 կուպոն: ■

Գրքեր

Կրավչուկն անկախության առաջին արդյունքների մասին

Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կրավչուկն Ուկրաինայի անկախության տարելիցի կապակցությամբ հեռուստատեսային իր ելույթում նշեց, որ Ուկրաինան անկախության առաջին տարում տնտեսության մեջ հաջողությունների չի հասել: Նա դա բացատրեց առկա հիմնախնդիրներով եւ նշեց, որ մեկ տարում տնտեսության մեջ իրադրությունը փոխելն անհնարին է: Կրավչուկի կարծիքով, *«Ուկրաինայում այսօր չկա այն քաղաքական ուժը, բացի ժողովրդից, որը կկարողանա վերցնել ժողովրդի ճակատագրի պատասխանատվությունն իր վրա»:* Նախագահը նշեց, որ անցած տարում Ուկրաինան ընտրել է *«ժողովրդավարական եւ օրինական պետության ստեղծման ուղին»:* ■

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
Apple® Macintosh®
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Azg armenian daily
Editor
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Դեսի Ռոստով

Դատախազը ցնդում է, որ ահաբեկչական ակտի ղեկավարը Հակոբ Բաղմանյանն է

«Նոյյան տաղան» լրատվական գործակալությանը հայտնի դարձավ գնդապետ Վլադիմիր Բլախոտինի սպանության կապակցությամբ մեղադրական եզրակացության համառոտ բովանդակությունը, որի դատական հետաքննությունն անց է կացվում Դոնի Ռոստովում: «Խորհրդային Միության ներքին գործերի նախարարության գործերի վարչության բիկունի պետ գնդապետ Բլախոտինը սպանվել է 1991 թ. ապրիլի 8-ին ավտոմատի կրակահերթով: Հետաքննության տվյալներով պարզվել է, որ գնդակները նախատեսված են եղել ոչ թե նրա, այլ գեներալ-մայոր Վյաչեսլավ Սաֆոնովի համար, որը 1990 թ. եղել է Լեռնային Ղարաբաղի պարեսը: Հայ ազգայնականները Սաֆոնովին մեղավոր են համարել ԼՂ-ում բազմաթիվ զոհերի համար եւ նրան իր գործողությունների պատճառով դատապարտել մահվան: Ահաբեկչական ակտի ղեկավար է ճանաչվել Հակոբ Բաղմանյանը, որը միաժամանակ ղեկավարել է երեք ահաբեկչական խմբեր Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտում եւ հեղինակություն է վայելել գրոհայինների մեջ: Ահաբեկչական խմբի մյուս անդամները համաձայնվել են մասնակցել ակտին զուտ հայրենասիրական մղումներից դրդված»: Գործի առնչությամբ քննություն են անցնում 76 վկաներ եւ մեկ փորձագետ: ■

ՆՈՐԻՆՎԵՍՏ
Ինվեստացիոն Ֆինանսային Ընկերությունը

առաջարկում է շահութաբեր գործարք անգամ նրանց, ովքեր երբեք բիզնեսով չեն զբաղվել

Մենք սկսում ենք
Philip Morris in Armenia

առեւտրական ինվեստացիոն նախագծի իրագործումը L&M 100's տինդ տուփերով, որակի վկայականով սիգարետների ուղիղ մատակարարում

Նվազագույն ներդրումը՝ մեկ բլոկի արժեքը

Մասնակցությունը նախագծին գերշահութաբեր է եւ հուսալի պաշտպանություն դրամի արժեզրկումից: Այսօր ներդնելով ձեր դրամը դուք արդեն հարստանում եք, քանի որ
արդեն այսօր մենք առաջարկում ենք նվազագույն գինը

Լրացուցիչ տեղեկությունների եւ պայմանագրի կնքման համար դիմեք՝ Երեւան, Աբովյան 14, հեռախոս 561 931, ֆաքս 561 165

ՆՈՐԻՆՎԵՍՏ
Ինվեստացիոն Ֆինանսային Ընկերություն

PUBLISET

ՀՀ նախարարների խորհրդի աշխատակազմի «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Արաքելոցաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Տպաքանակ 20 000. Պատուեր 1595 Ստորագրված է տպագրության՝ 2.12.1992

digitised by A.R.A.R.@